



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4

Ճ 11

Դ. ՃՈՆՔԱԶԵ

# ՍՈՒՐԱՄԻ ԲԵՐԴԸ

Թարգմ. վրացերենի չորրորդ սպազմությունից  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՐԻՄԱՆՆԵՐՆԵՐ

Գ. Շ. Ա. Կ. Ա. Հ. Հ. Ա. Ռ. Ա. Կ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

ՅԵՐԵՎԱՆ - 1929

३९८

मात्रां विद्युत्

विद्युत् विद्युत्

894.631

Դ. ՃՈՆՔԱՅԵ

~~9  
8-11~~

# ՍՈՒՐԱՄԻ ԲԵՐՈՒՅ



Թատրոնից վացեան չուռող սպազմուրբանից  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԻՄԱՆՆԵՐԸ

Տառհայտ  
2698



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.— ՅԵՐԵՎԱՆ, 1929.

*Հր. № 968, Գրառեպվար № 1840 ը : Տիրաժ 2000.*

*Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում.*

*Պատվեր № 71:*

## ՎՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ

Այս չորրորդ անդամն և տպում մեր Հրատարակչությունը «Սուրամի բերդը» Առաջին լերեք հրատարակությունն սպառվեց, իսկ «Սուրամի բերդի» պահանջն ալոր ել գեռ մեծ և Ալսակիսի մեծ չափով տարածվելուն վոչ մի վրացերեն գեղարվեստական լերկ չի արժանացել:

Ի՞նչով բացատրել Դ. Ճոնքաձելի լերկի իսկապես ալսակիսի հազվադեպ հաջողությունը, նրա անսովոր տարածումը:

«Սուրամի բերդը» 64 տարի առաջ գրված պատմվածք է: Ալսքան ժամանակվա ընթացքում շատ ջուր և անցել Հիմքից փոխվեց մեր լերկրի կենցաղը:

Այն ժամանակ ճորտատիրություն եր, լեր մարդուն փոխում ելին բարակների ու քերծեների (շների) հետ, լծում և հետը անասունի պես վարվում, ալժմ այն ժամանակվա ճորտ-զլուզացին և բանվորն և լերկրի տերը: Նրա ձեռին և ուժն ու իրավունքը, նա յե պետությունը կարգավորում ու զեկավարում:

«Սուրամի բերդը» իր բովանդակությամբ ճիշտ այն մոալլ ժամանակվա պատկերավորումն և, լերը մարդս մարդու ստրուկն եր, լերը ճորտատերը (պարոնը) անգործ ընկած՝ ամեն ինչի տեր եր, իսկ ճորտը՝ ամեն բանի ստեղծագործողը՝ վոչնչի տեր չեր:

Այս լերկի մեջ և ամփոփված ճորտատիրության

լի ու ճշգրիտ պատկերը։ Ինչպես զեղարվեստական յերկ, իհարկե, նա ալսորվա ընթերցողին լրիվ բավարարութիւն չի կարող տալ։ Այս զրվածքի բովանդակութիւն դասավորումն ու մշակումը բոլորովին հասարակ ե ու պարզ։ Պատմվածքի բովանդակութիւնը հիմնված ե հին ավանդութիւնն վրա, վորն ավելի հեքիաթի յե մնան, բայց մեջ ընդ մեջ այս ավանդութիւնը հիմնված ե դառն իրականութիւնն վրա։

Սրա մեջ լսվում ե ձորտի հուսահատ տնքոցը և ձորտատերի անամոթ հոհոցը։ Հենց այս ե պատճառը, վոր «Սուրամի բերդը» չի կորցնում իր նշանակութիւնը և ալսորվա ընթերցողն ել մեծ ուշադրութիւնը ե կարդում այն։ Ալստեղ պարզ և աշկարա կտեսնենք մեր յերկրի պատմութիւնն յերեկը։ Ալստեղ լիովին նկարագրված ե այն ժողովրդի դրութիւնը, վորն այս վերջին 50 տարվա ընթացքում կրեց մեծամեծ տանջանքներ և անհամար զոհեր տվեց աղատութիւնն ձեռք բերելու համար։

«Սուրամի բերդը» հետաքրքիր ե և նրանով, վոր ձոնքաձեն այս զրվածքը դրեց հենց այն ժամանակ, յերբ դեռ վիճելի յեր ու չեր ապացուցված՝ թե ինչ ե ձորտատերը ձորտի համար—տե՞ր ե՝ թե բռնակալ։ Վրաստանում ձորտատիրութիւնը հիմնած եր ձնողական փոխհարաբերութիւնն վրա, ալսպես ելին ասում ե ապացուցում նրանք, ովքեր այն ժամանակ կարող ելին գրել և իրավունք ունելին արտահայտվելու հրապարակապես։

— Վոչ, ձորտատիրութիւնը մարդու ստրափելի ստրկացումն ե և աննկարազրելի բռնակալութիւնն մարդու կողմից։ — ահա թե ինչ եր ձնոնքաձելի պատասխանը։

Այս պատասխանը նու առանց քաշվելու և համար-  
ձակ նետեց նրանց լերեսին, ովքեր շատ ելին խոսում  
ծնողական խնամատարության մասին, բայց իրենց  
«ծնողական» վարձունքով ավելի ու ավելի ելին ծան-  
րացնում եւ զաժան զարձնում ստրկության լուծը:  
«Սուրամի բերդ»-ի հեղինակ Դանիել Շոնքածեն ծա-  
գումով զլուզացի լի, բայց վոչ հասարակ զեղջուկի  
վորդի:

Նրա հալը քահանա լիր, հետեապես ինքը հոգե-  
վոր ծագումն ուներ: Ինչպես քահանալի վորդի՝ նա սո-  
վորում եր զպրոցում և ուսումն ավարտելուց հետո  
ուսուցչություն եր անում սեմինարիալում: Նա արդեն  
կտրված եր զլուզական ոջախից: Նա առանձ-  
նապես պարոն չուներ, բայց նրա աղդականներն ու  
բարեկամները զլուզացիք ելին, զլուզական լծի տակ  
ելին անցկացնում իրենց սե որերը: Հենց այս եր պատ-  
ճառը, վոր Շոնքածեն զլուզացու վիճակով հետաքըր-  
քրվեց և կարողացավ ճշգրիտ պատկերացնել ճորտա-  
տիրության իսկական վիճակը:

Ճորտատիրությունը վոչնչացավ, փշրվեց ստրկու-  
թյուն շղթան, բայց Շոնքածելի «Սուրամի բերդը» լիր-  
կար ժամանակ կմնա աշխատավոր ժողովրդի հիշողու-  
թյան մեջ, վորովհետեւ «Սուրամի բերդ»-ով ճորտատի-  
րությունն առաջին անգամ հրապարակապես զամվեց  
անարդ ոլունին:

Ահա այս և պատճառը, վոր ընթերցողը «Սուրա-  
մի բերդ»-ին այսպես տաք եւ կպեր

## ԴԱՆԻԵԼ ՃՈՆՔՍԶԵ

(Համառոտ կենսագրություն)

60-ական թվականների վրաց տաղանդավոր բելետրիստ Դանիել Ճոնքաձեն ծնվեց 1830 թվին Դուշեթի գավառի Նվավիլ գյուղում։ Նա ծագումով գյուղացի լեր, մանկությունից վորրացած՝ ապրում եր հորեղբայրների մոտ։ Յերբ 9 տարեկան դարձավ, նրա քահանա հորեղբայրները, հենց տանը սովորեցրին նրան վրացերեն գրել-կարդալը. ապա ընդունել տվին Դորու հոգեոր դպրոցն, ուր նա սովորում եր ջանասիրությամբ. Գորու հոգեոր դպրոցն ավարտելուց հետո, ուսումը շարունակելու համար անցավ Թիֆլիսի հոգեոր սեմինարիան, վորի դասընթացքն ավարտեց 1858 թվին, 28 տարեկան հասակում։ Ուսումն ավարտելուն պես նա նշանակվեց Թիֆլիսի հոգեոր դպրոցի ուսուցիչ, ապա և տեսուչ։ 1859 թվին 29 տարեկան հասակում ամուսնացավ. մի տարուց հետո ալրիացավ. մնաց մի վորդի։ Կնոջ մահվանից հետո ինքն ել լերկար չաղըց։ Վորրության մեջ մեծացած, մտավորապես և բարոյապես զարգացած, շարունակ չարքաշ կյանք վարող Դանիելի վրա խորը ազդեցություն թողին կյանքի հարվածները և Փիզիկապես թուլացրին նրան։ Սրան ավելացավ և սիրելի կնոջ մահվան կսկիծը, վորը և արագացրեց նրա մահը, կնոջ մահվանից հետո նա ապրեց մի տարի ևս, մեռավ 1861 թվին և թաղեցին Թիֆ-

լիսի վերալի լեկեղեցու զավթում, իր կնոջ մոտ Սրանց գերեզմանը պատած է լերկաթե վանդակով, ունեն տապանաքարեր պատշաճ գրությամբ:

Ինչպես շատ շատերը, նույնպես և Դանիել Ճոնքաձեն կմատնվեր մոռացության, լեթե նա իրեն կլանքում տեսածը չարձանագրեր մի փոքրիկ պատմվածքի մեջ, վորի անունն ե «Սուրամի բերդը»: Դանիել Ճոնքաձեն իր աղնիվ բնավորությամբ և ջանասիրությամբ իր ժամանակին նշանավոր անձնավորություն եր: Այս հատկություններով և ձիրքով նա այնպիսի զարգացումն ստացավ, վոր հազվագյուտ եր այն ժամանակվա վրաց հասարակության մեջ: Դանիելն ուշադրությամբ հետեւում եր Ռուսաստանի նոր շարժումներին թե կլանքում և թե գրականության մեջ: Ռուսաց գրողների լերկերն ընդդեմ ճորտատիրական կարգերի՝ չելին կարող անուշադիր մնալ Ճոնքաձելի համար և շատ կարելի լե մեծ տղեցություն ել ունեցան նրա «Սուրամի բերդը» գրվածքի վրա: Դ. Ճոնքաձեն առաջինն եր վրացի գրողների մեջ, վորը ձայն բարձրացրեց ճորտատիրական կարգերի դեմ: Ահա հենց այդպիսի ժամանակ «Սուրամի բերդ»-ի տպվելը «Ծիսկարի (Արշալուս) ժուռնալում մեծ համարձակություն եր հեղինակի կողմից:

Յեվ արդարեւ «Սուրամի բերդը», վորի մեջ ճշշդիտ կերպով նկարագրված եր ճորտի անմիտթար դրությունը, ճորտատիրական կարգերի դաժան պալմանները, անուշադիր չմնաց ժամանակակից հասարակության կողմից: Նրանք բարկությամբ հարձակվեցին հեղինակի վրա և իրենց զզվանքն ու նողկանքը հայտնեցին նրան: Միքանիսն այնպես կատաղեցին, վոր

նույնիսկ ցանկացան Կուկիալի (Թիֆլիս) կամուրջից  
զետը նետել նրան. բայց ձռնքաձեն փախուստով ա-  
զավեց նրանցից։ Միքանի սանձարձակ պարոններ  
ել ուղեցին ժողովարանում ծեծել, բայց դրանցից ել  
փախուստ տվեց։

«Սուրամի բերդ»-ի քննադատությունը տպվեց  
1863 թվին «Յիսկարի» ժուռնալում։ Այդ քննադատու-  
թյան հեղինակն եր նշանավոր գրող և հաստրակական  
գործիչ՝ Անտոն Փուրցելաձեն։ 1875 թվին «Սուրամի  
բերդ» լույս տեսավ առանձին գրքունիով, վորը քըն-  
նադատեց «Դրոյերա» (Ժամանակ) լրագրում Գիորգի  
Թումանիշվիլին։

«Սուրամի բերդ»-ի առաջին տպագրությունից  
ցայսոր անցել ե 54 տարի։

## ՍՈՒՐԵՄԻ ԲԵՐԴԻԼ

Ամառվա սաստիկ շոգին, յերբ քաղաքի բնակիչները քաղաքից դուրս հով տեղեր են փնտում, միքանի յերիտասարդներ, վորոնց թվում և ձեր խոնարհ ծառան, պայման կասլեցին ամբողջ ամառվա ընթացքում յերեկոները հավաքվել սաղի վրա Անչիսխատի\* մոտ և ժամանակ անցկացնել մինչ կեսգիշերը։ Իմիջի ալոց, պայմաններից մինի համաձայն, հերթապահը պարտավոր եր պատմել մի պատմվածք, հեքիաթ կամ մի ալբան մեր Վրաստանի կյանքից։

Գեղեցիկ յերեկոներից մինն եր, վորով, բացի շոգից, հարուստ և մեր Վրաստանը։ Յերիտասարդները նոր ելին վերջացրել լողանալը, վոմանք թել ելին խմում, վոմանք հագնվում, վոմանք շրջապատել և ականջ ելին դնում Դ. Բ.-ին, վորը թառը ծնկանը դրած նվազում եր և հետն ել ցածը ձախով կլկլացնում։

Մի փոքր հետո, յերբ ամենքը թել խմեցին

\* Անչիսխատի—Թիֆլիսի վրաց պատմական յեղեղեցիներից մինը։

և տղերքն սկսեցին ընթրիքի պատրաստություն  
տեսնել, հիշեցին, վոր հերթապահը դեռ ևս չի  
կատարել իր պարտականությունը։ Հարց ու փորձ  
արին, թե ով ե հերթապահն, յերևաց, վոր հերթը  
վերջացել եր. սրան խնդրեցին, նրան խնդրեցին,  
բայց վոչ մեկը հանձն չառավ կատարելու այս  
պարտականությունը։ Բանն ընկավ վիճակ գցե-  
լուն։ Վիճակն ընկավ Նիկոլին։

— Ո՞, կեցցե Նիկոն, շնորհավորում ենք. —  
Կանչեցին ամենքը։

— Ներողություն, տղերք, ներեցեք այսոր,  
ձեր արել, չգիտեմ ինչ ասեմ, չեմ պատրաստվել։

— Ե՞ս, Նիկո ջան, աստծու անունը տուր  
և սկսիր — լինում ե, չի լինում... մնացածն ասու-  
ված վողորմած ե, հավատացնում եմ, — ասաց  
Խրատելով Սիկոն։

— Շատ լավ, ուրեմն լսողություն և ուշա-  
դրություն ու սկսեց։

## I

Գյուղացոց մեջ ել կարգին աղջկերք կան.

Գյուղն ել, տեսնում ես, զգալուն սիրտ ունի.

Նա յել լավ գիտե, թե ինչ ե սերը.

իսկ դու

ի. Կերեսելիձե.

— Հորեն, են տները Մուխրանի \* տերերինն ե, տեսնում եք, —և ձեռքը մեկնեց դեպի Մուխրանի տերերի տները:

— Այո, այո տեսնում ենք, — պատասխանեցին ջեհելները:

— Այդ տներն այժմ քարուքանդ են, չգիտեմ ինչու, տերերն ել ուշադրություն չեն դարձնում, սրտից հանել են, բայց դրանք մի ժամանակ հայտնի տներ ելին և առաջինն ելին համարվում մեր քաղաքում։ Ամեն մի նորեկ, իմիջի ազոց, գալիս եր տեսնելու և այդ տները։ Բայց այդ տները միայն դրանով չելին նշանավոր, ասում են՝ վոչ մի տնից չելին դուրս գալիս այնքան բարձրահասակ, այնքան սիրուն, քաղաքավարի և լավ հագնված ծառաներ, վորքան այդ տներից։ Ինքը թագավորը նույնիսկ նախանձում եր դրանց ծառաներին։ Այդ ծառաներից մինի անունն եր Դուրմիշխան։ սա սաստիկ քաջ և գեղեցիկ տղամարդ եր և Մուխրանի պարոնի նազիրը։ Աղախիններից Գուլիսվարդին եր Մուխրանի իշխանի կնոջ սիրելի աղախինը։ Յես այնպես չեմ կարող նկարագրել այդ աղախնու գեղեցկությունը, ինչպես իմ հոգելուս դայակը, վորից և լսել եմ սույն պատմությունը. ուստի և թողնում եմ. բոյը սալբուչինար, և ու

\* Մուխրանի—գլուղ և Թիֆլիսի գավառում։

սաթի նման աչեր, բյուրեղլա բարակ մատներ,  
մի խոսքով, Սիկո, քո կատուից ել սիրուն:

— Լավ, նրանք իրար սիրեցին, հետո,—պատասխանեց Սիկոն:

— Այս, սիրեցին իրար այնպես, ինչպես  
գիտեն սիրել առհասարակ արևելքում, բայց, ներեցեք, Գուլիսվարդին միայն սիրեց, իսկ թե  
ինչպես եր սիրում Դուրմիշխանը, ալդ հետո կերեա: Խեղճ Գուլիսվարդին հոգով-որտով եր սիրում, բացի իր սիրուց նրա համար այլ կյանք  
գոյություն չուներ: Շատ անգամ և այս կուր  
գետը, հենց այստեղ, վորտեղ մենք ժամանակ  
ենք անցկացնում, վկա յեղել նրանց սիրուն:  
Դժբախտ աղջիկը կարմղ եր յերեակայել՝ թե  
յերբ նա խոսում եր իրենց սիրո մասին, նրա  
սիրելի Դուրմիշխանն իսկի չեր ել մտածում արդ  
մասին և միշտ հնարք եր վորոնում, վոր մի կերպ  
ասեր նրան իր սրտի խորհուրդը: Մի անգամ,  
յերբ սովորաբար Դուրմիշխանը և Գուլիսվարդին  
հանդիպեցին իրար այստեղ և խոսում ելին իրանց  
ապագա կյանքի մասին, Դուրմիշխանը հանկարծ  
ասաց.

— Գիտես, Գուլո ջան, յես վորաեղացի լեմ:

— Եղ ի՞նչ հարցնելու բան ե, իհարկե գիտեմ:

— Յես իմերել եմ, Ծերեթլանց ճորտը և  
քեզ նման աղախնու միտկ վորդի:

— Ինչ անհենք, զրա համարել լավ ես, սիւ-  
լելիս:

— Այս, բայց դու գիտե՞ս, թե ինչպես ըն-  
կա այստեղ:

— Վոչ, վոչ, պատմիր, քեզ մատաղ:

— Մի անգամ իմ այժման պարոնը յեկավ  
իմերեթ՝ իմ այն ժամանակվա պարոնի մոտ: Հենց  
այն միջոցին, յերբ նրանք քեզ ելին անում, յես  
մտա այն սենյակը, վորտեղ նրանք նստած ելին:  
Մուխրանի իշխանն ինձ տեսնելով, դժբախտաբար  
հավանեց ինձ ու գովեց: Դրանով արդեն ամեն  
բան վերջացավ: Մյուս որը, յերբ Մուխրանի  
իշխանը վերադառնում եր, ինձ ել նստեցրին ձիու  
վրա՝ նրա ծառալի քամակը: Պիտի տեսնելիր, Գու-  
լո ջան, թե վոնց եր իրան սպանում խեղճ մայրս:  
Ամբողջ աշխարհը գլխին հավաքվեց, բայց չկարո-  
ղացան լոեցնել նրան. իսկ յես, հիմարս, զարմա-  
նում ելի այդ կակիծի վրա, յես չգիտելի, վոր  
մորս վերջին անգամն ելի տեսնում: Թե ինչեր  
անցավ նրանից հետո, Վարդո, դու չես կարող  
յերևակայել. և ինչեր չփորձեցի, ել սովածու-  
թյուն, ել ծարավ, ցուրտ, ծեծ, ծաղը և ուրիշ  
շատ սրանց նման բաներ անցան գլխովս ձեր  
Վրաստանում: Ով ինչ փչացներ, միշտ յես ելի  
մեղավոր: Մ՛վ գողացավ այս ինչ բանը—իմերելը.  
ո՞վ կոտրեց—իմերելը. ումն են ծաղրում—իմե-

բելին, բարկացած ժամանակ ումն են ծեծում — իմերելին. ում համար եր ասվում իմերեթցուն ծաղրող առածները — իմերել տղի համար։ Վարդո, յես շատ անգամ եմ աստծուն անիծել ինձ ստեղծելու համար, շատ անգամ եմ դառն արտասուք թափել, բայց ով կար ինձ մխիթարող, վոչ վոք, նույնիսկ ամենավողորմած աստվածն ու մխիթարողը ինձ համար գոյութիւն չուներ, յես նրան չեցի ճանաչում։ Ահա այսպես, Վարդո ջան, մինչև քեզ հետ ծանոթանալս, մի մարդ չունելի, վորին կարողանալի հայտնել սրտիս դարդերը։

— Վերջ տուր այդ տեսակ խոսակցության, ինչ կարիք կա, հրամայում ե քեզ քո Վարդոն։ — ասաց Վարդոն և համբուրեց նրան այնպիսի ջերմ համբուրով, վորի նմանը մեզանից շատ շատերը դժվար թե արժանանան իրենց կլանքում։ Յերանի Դուրմիշխանին։

— Գիտես, Դուրմիշխան, ինչ հիշեցի. յերբ պսակվենք, մեր տերերին խնդրենք, վոր մի Յամսով արձակեն մեզ ու գնանք ձեր տուն, խեղճ մայրդ վնրքան կուրախանա։

— Ավելի կուրախանա, յերբ ինձ իմ Գուլիսվարդու հետ կտեսնի, չե՞։

— Ալո, դրա համար ել։

— Հետո, Վարդո ջան, կվերադառնանք, — տիրած ասաց Դուրմիշխանը։

— Այս, հետո ինչ, դու ելի քո նազիրությունը կշարունակես, յես ել իմ աղջիկ պարոնին կծառալեմ։

— Կանցնի ժամանակ, կունենանք քեզ նման սիրուն տղա, դու կմեծացնես նրան խնամքով, վորդուս կսիրես չե՞ն, Գուլո ջան։

— Սաստիկ, ասստիկ, — շուտափութ վրա բերեց Գուլոն։

— Մի ըոպե յերևակալենք, վոր մեր պարոնի մոտ ով վոր յեկավ և խնդրեց մեր վորդուն, ինչ կանենք։

Այս հարցը շիոթեցրեց Գուլիսվարդուն, խեղճն իսկի չեր կարող յերևակալել, թե կարող ե պատահել՝ իր վորդուն խլեն։

— Այդ անկարելի յե, աղջիկ պարոնս ինչ ե շինուած, նա չի թողնի. վոչ, չի կարելի, մի փոքր հետո ասաց Վարդոն մտածկոտ կերպով։

— Յերևակալենք, վոր մինչեւ այն ժամանակ քո աղջիկ պարոնը մեռավ և նրան փոխարինողն ել իսկի քեզ չի սիրում, հետո

— Վոհ, այդ անկարելի յե, Դուքմիշխան, առաջ իմ կյանքիս թելը թող կտրվի։

— Աշխարհիս յերեսին անկարելի վոչինչ չկա, Գուլո ջան, քանի մենք պարոնի ճորտեր ենք, բախտավոր չենք կարող լինել. աղջիկ պարոնիդ ասա, վոր յեթե քեզ սիրում ե, քո բախտա-

վորությունն ե ցանկանում, ինձ ազատի ճորառությունից, ասա, վոր յես չեմ պսակվի քեզ հետ, մինչև չաղատվեմ։ Այս խոսակցությունից հետո անցավ մի շաբաթ, և սիրահարվածները կրկին այստեղ հանդիպեցին իրար։ Դուրսմիշխանի ծոցումն եր արդեն իր ազատման թուղթը։

— Ահա, իմ Դուրսմիշխան, հո ասում ելի, վոր մեր վորդոց վոչ-վոք չի ծախի, այժմ ասա, յերբ պսակվենք։

— Մի շատապիր, Վարդո ջան, համբերիր, շտապելով գործ չի շինվի։

— Կրկին ինչ պատճառ գտար, խելոքս, համբերիր. յերբեմն մի պատճառ ես հնարում, յերբեմն՝ մյուսը։

— Ի՞նչ անեմ, հոգիս, ծաղրում ել ես, վոր քո բախտավորության մասին եմ մտածում. դու կարծում ես յես չեմ ուզում, վոր շուառվ քեզ կին կանչեմ, իմ ծաղիկ Վարդո, բայց ժամանակը պահանջում ե համբերել, հետո մեր բախտավորությունն ավելի հիմնավոր կլինի։

— Ի՞նչ, ի՞նչ, ելի նոր բաներ հնարեցիր, ասա, շնուռ։

— Մի բարկանար, Վարդո ջան, հանգիստ ականջ դիր, դու ինքդ ինձ կարդարացնես։

— Ասա, ասա, շնուռ։

— Վարդո ջան, ճիշտ ե, այժմ մենք ազատ

ենք, բայց դու գիտես՝ վրաներս հագած շորերից  
ավելի բան չունենք:

— Ինչանենք, դուքս նազիրությունն արա,  
յես ել իմ սողջիկ-պարոնին կծառայեմ, միթե չենք  
կարող ապրել, մինչև այժմ վճնց ելինք ապրում:

— Վոչ; մինչև մենք այնքան չունսնանք  
ապրուստի համար, վոր ապրենք առանց ուրիշ-  
ներին ծառայելու, մեր ազատությունը—ազատու-  
թյուն չեւ:

— Ոհ, աստված իմ, ապա ինչ պիտի անենք:

— Վոչինչ, դուքս աղջիկ պարոնի մոտ  
կմնաս իսկ յես, յես կգնամ աշխատելու, վոնց  
վոր կրինի կաշխատեմ, աստված հաջողություն  
կտա գործիս, Վարդո ջան, գիր գիտեմ, լեզու-  
ներ գիտեմ ու միքանի արհեստ. կգնամ փող  
կճարեմ, կհարստանամ, և ապա կդամ քեզ մոտ,  
ոհ, ինչ անուշ կհամբուրեմ քեզ, իմ սիրունիկս.—  
զլիսից բռնեց և անուշ-անուշ համբուրեց նրա  
աչերը:

— Շատ լավ, յեթե դու այդպես ես ցան-  
կանում, յես ել ինչ կարող եմ ասել. յերբ ես  
ուզում դնալ,—հարցը տիսրությամբ Գուլիսվար-  
դին:

— Յերկար սպասել պետք չի, ամեն մի ժամ  
ուշացնում եմ մեր միանալը, լավ ե շտապել, վաղը  
կգնամ:

Վաղը, ուրեմն վաղը գնալու լես, խեղճ  
իմ Դուրմիշխան, ով պիտի խնամի քեզ, յեթե  
վոչ լես, ով պիտի լվանա կամ կարկատի շորերդ,  
կամ վոր հիվանդանաս, ով պիտի նայի, հա.—և  
համբուրեց ճակատը:

Անուշ, անուշ համբուրիր թշվառ Գուլիս-  
վարդ, շարունակիր խոսել, այդ ե բախտավորու-  
թանդ վերջին ժամը. սրանից հետո բերնիցդ ել  
վոչինչ չի լսվի քո սիրո մասին, վո՞ն, ինչ բախտա-  
վոր կլինելիք, յեթե այժմ ևեթ մեռնելիք, Վարդո,  
ներման խոսքը շրթունքներիդ և սերը սրտումդ.  
մահդ այնպես խաղաղ կլիներ, ինչպես անմեղ  
մանկան քունը. և շատերը գերեզմանիդ վրա ափ-  
սոսանքի արցունք կթափելին. բայց հետո, եհ,  
ինչ կարիք կա տուած վաղտալու:

Մյուս որը սիրուն, զուգված-զարդարված  
մասրեքով, արծաթաջրած զենքով, լավ սև ձիու  
վրա նստած՝ Դուրմիշխանը հեռացավ քաղաքից:  
Մեկնելուց ճիշտ մի ամիս հետո Դուրմիշխանը  
մի նամակ ուղարկեց Գուլիսվարդուն և ապա  
յերեք տարվա ընթացքում համարյա թի ամիսը  
մի անդամ Վարդոյին նամակ եր ուղարկում և  
ամեն անգամ գրում եր իր շուտ գալու մասին:

Շատ ջրեր անցան այդ յերեք տարում,  
շատ բան փոխվեց այս աշխարհում, բայց չփոխ-  
վեց Վարդոյի սիրտը: Այնտեղ ելի այնպես վառ

եր դեպի Դուրմիշխանն ունեցած ուժգին սերը, ինչպես նրանց ծանոթության առաջին որը։ Վարդոն սրբությամբ պահեց իր սերը, թեև շատերն ելին սիրաբանում և շատ լավ մարդիկ ել ուզում ելին հետը պսակվել։ Իսկ Դուրմիշխանն ի՞նչով եր զբաղված այդ ժամանակ։ Նա Թիֆլիսից մեկնելուց հետո մեծ հանդեսով ամուսնացավ Սուրամում, \* վորպես տնփեսա։

Մի անգամ, լերեք տարուց հետո, աղջիկ-պարոնը կանչեց Վարդուին և հրամայեց հայելի բերել։ Վարդոն բերեց հայելին և տվեց։

Աղջիկ պարոնը նայեց հայելում, ծամերն ու լաշակն ուղղեց ու ասաց Վարդուին։

— Ելի սիրուն եմ, Վարդու։

— Միրուն եք, շատ սիրուն, իմ կյանքս, քեզ մատաղ լինեն ինչ-վոր աշխարհումս գեղեցկուհիներ կան.—պատասխանեց Վարդոն և ձեռը համբուրեց։

— Ի՞նչու, աղջի, դուն ել հո մեջը կընկնես, չե՞ վոր դուն ել ես սիրուն։

— Ինձ ել-ե վերաբերում, լես ավելի շուտ պիտի մատաղ լինեմ քեզ, իմ չափ ով ե սիրում քեզ։

— Լավ, լավ, իմ Վարդու, դու լավ աղջիկ

\* Սուրամը քաղաք և ամառանոց՝ Գորու գավառում։

ես ու գեղեցիկ, դրա համար ել շատերն են ու-  
զում քեզ:

— Ե՞ն, ինչ եք հրամայում, աղջիկ-պարոն,  
սպասեք, Դուրմիշխանի մոտ պիտի մատնեմ ձեզ,  
— ժպտալով ասաց Վարդոն:

— Բայց, վոր ել չեկավ քո Դուրմիշխանը,  
արի ու մի մոռանա, նա վոր մոռացնվ, յես  
այնպես լսեցի, վոր ուրիշին ե ուզել:

— Ե՞ն, աղջիկ-պարոն, միշտ դրանով ես  
վախեցնում, ուրիշին ե ուզել, ուրիշին ե ուզել.  
Նրանից ավել մարդ չկա. իմ բախտո ինձանից չի  
փախչի:

— Ո՞ւ, լավ ասիր, Վարդո ջան, թեև աստված  
բաժանեց ձեզ իրարից, բայց համբերիր, վոր-  
դի, աստված համբերելուդ համար այնպես կրախ-  
տավորեցնի քեզ, վոր վոչ թե Դուրմիշխանը,  
այլ նրանից լավերն ել յերանի կտան քեզ:

Այս խոսքերը, ճիշտ ե, Վարդոն չհասկացավ, թե  
ինչու համար եր ասված, բայց զգաց, վոր լան բան  
չեն նշանակում: Արդարե, Վարդոն չեր կարող  
յերևակայել, վոր իր Դուրմիշխանը կդավաճաներ  
նրան. բայց կարծում եր, վոր նա կամ դերի յե-  
րնկել, կամ մեռել, ուստի և վախեցավ: Նա դեռ  
չեր ուզում այդ գժբախտությունը լսել և կամե-  
նում եր խոսքը փոխել. բայց նրա սիրտը չհամ-  
բերեց և այնպես ձեւացրեց, իբր թե՝ ինչ աղջիկ-  
պարոնն ե ասում, վաղուց դիտե:

— Ի՞նչ անեմ, աղջիկ-պարոն, ինչ վոր տսաւ,  
ծուկամքն եւ, թող այն կատարվի, դուք լավ կա-  
ցեք, յերեխ իմ բախտս այդպես եր, ինչ անեմ,  
պիտի համբերեմ:

— Ռւըեմն զիտես, թե ինչ պիտի ասեմ:

— Գիտեմ, աղջրկ-պարոն, են որն իմացա,  
բայց չգիտեմ, թե վոնց ե յեղեր:

— Ել ինչ վոնց ե յեղել, վորդի, այ նրա նա-  
մակը. մեղքս գալիս եցիր, դրա համարել շելի տ-  
սում մինչև այժմ. դարդ մի անի, վորդի, նոր,  
մեր ազնվականը խնդրեց, վոր քեզ նրան տամ:

Մինչև աղջիկ-պարոնը խոսքը կվերջացներ,  
Վարդոն սկսեց կարդալ Դուրմիշխանի նամակը,  
գրված Սուրամից: Ահա այդ նամակի իսկական  
պատճենը.

«Ի՞ն մեծ աղջիկ-պարոնի, իշխան Ծերեթելի  
դստեր՝ Մարիամի, Մուխրանի մեծ իշխանի ա-  
մուսնու ցավը տանի նրա հետին վոտաց փոշի՝  
Դուրմիշխան Ծամալաձեն: Ապա պիտի հայտնեմ  
ձեզ, իմ աղջիկ-պարոն, ձեզանից հեռանալուց  
հետո առևտուր սկսեցի. դես ու դեն շրջելով,  
սրառումս ասում եցի, քիչ ու միշ փող կհավա-  
քեմ, ապա հետ կդառնամ ու կապրեմ ինձ հա-  
մար, ել նեղություն չեմ տա պարոնին, յերեխ  
Վարդոն ել միքիչ բան կունենա. բայց յերբ մի-  
քիչ փող հավաքեցի և մտադրվեցի վերադառնալ-

մի գիշեր մնացի Սուրած մի գլուղացու մոտ,  
վորի ոջախը Ավթանդիլանք ե կոչվում. Այստեղ  
իմ աղան, վորի մասին յես զրում եցի Վարդովին  
նամակներիս մեջ, յախիցո կավագ՝ թե պիտի ան-  
պատճառ այդ գլուղացու աղջկան ուզես, վորը  
աղայիս սանուհին եր, և ուզում եր նրան մար-  
դու տալ Յես ե՛ խաթրը չկոտրեցի և պսակվե-  
ցի այդ աղջկա հետ, տնփեսա մանելով. Ահա  
այսպես, իմ աղջիկ-պարոն, թեև ուզում եցի Վար-  
դովի հետ պսակվել, բայց յերեկի աստծու կամքը  
չեր. Իմ կողմից Վարդովին կասեք, վոր լավ մար-  
դու ուզի և ինչ վոր սրառվ ուզում ե՛ պահան-  
ջի ինձանից. Թե վոր իմ մասին կհարցնեք, յես  
ել լավ եմ. մի աղա յել ունեմ:

Այդ ըոպելին կայծակ վոր խփեր Վարդո-  
վին, այնպես չեր շշմեցնի, ինչպես վոր շշմեց այդ  
նամակը կարդալուց հետո:

Կարդալիս, յերբ հասավ այնտեղ, վորտեղ  
Դուրմիշանը զրում եր իր ամուսնության մա-  
սին, աչքերը մթնեց, այլև բան չտեսավ և թիկն  
ընկավ թախտի վրա, աջ ձեռքի վրա հենվելով.  
Գլուխը կախ, սաստիկ գունատված Վարդոն մարմ-  
նացած կսկիծ եր, բայց այնքան գեղեցիկ, վոր  
յերբ աղջիկ-պարոնը նայեց, նրա սիրտը չհամ-  
բերեց և ճակատը համբուրեց:

— Վարդո, վորդի, աղջի, Վարդո, յերեսիդ

խաչ արա, վորդի, — շվիոթված ասում եր աղջիկ-պարոնը ու տրորում նրա քթածակերն ու ականջները. — աղջկերք, տղերք, ով կաք ալդտեղ, ողնեցեք:

Այս ձայնի վրա ներս ընկան միքանի աղջիկ և նրանց ողնությամբ մի փոքր հետո Վարդոն ուշքի յեկալ, աչքերը բացեց և ա՛խ քաշեց:

— Յերեսիդ խաչ արա, վորդի, խնդրիր աստծուն, վոր ցավերդ մեղմացնի, — խրատում եր աղջիկ-պարոնը. բայց Վարդոն չեր լսում, այլ լալիս եր դառնապես:

— Խեղճ Վարդո, տղերք, վողորմաթասը խմենք Վարդոյի, այսոր բավական ե:

— Ով որ չխմի՞... — բացականչեց մեզանից մինը:

— Թող ալդպես լինի:

— Ելի շարունակի՞, — հարցըին մյուսները:

— Ել ինչ շարունակի, — նույն որը Գուլիսվարդուն տեսել ելին մի հայտնի գրքաց կնոջ հետ ծածուկ խոսելիս:

Միքանի ըսպելից հետո Կախեթու գինին և հանգուցյալ Ալեքսանդր Ճավճավածելի յերդերը մոռացնել տվին ջահելներին՝ թե Վարդոյին և թե նրա հոգեթասը. Յերիտասարդը մահը չի միտ բերում և ատում ե այն ամենը, ինչ վոր մահն է հիշեցնում:

## II

**Մյուսողը յերիտասարգները սովորական ժամանակից միքիչ շուտ հաջաքվեցին և հենց վոր Նիկոն յեկավ, խնդրեցին շարունակել, բայց Նիկոն իր հերթը վերջացրել եր, չուզեց շարունակել, հարձ ու փորձ յեղավ՝ թե մի և հերթապահը, յերիաց, վոր Սիկոն եր: Սիկոն շատ խնդրել չտվեց, գդակն ուղղեց, խնդրեց ուշադիր լինել ու սկսեց:**

— Տղերք, այժմ խնդրում եմ, մի քիչ յետ դառնանք:

— Յետ քաշվեք, տղերք, — կանչեց Պեհն, վորը սովորություն ուներ միշտ հակածառել, վորի համար և անվանեցինք նրան սոսկալի փիլիսոփա:

— Թե վոր չեմ սեալվում, — սկսեց Սիկոն, — մեր Վարդոցի սիրեկան Դուրմիշխանին մեր Նիկոն թողեց քաղաքից դուրս լայն ճամպի վրա:

Դուրմիշխանը քաղաքից վոր հեռացավ... բայց սպասեք՝ նրա ծագմւմը.

— Հիմա դու ինքդ յետ քաշվիր. — ասաց Ելեքոխն:

— Լավ, Ալեքսի, ել չեմ ասի:

— Ալեքսի, հիշմամ ես տուգանքը, են կոտոշը\* դեռ սաղ ե, հա. — կանչեցին ընկերները:

\* Կոտոշ—վրացերեն զանծի, զինի խմելու յեղցուր և Վրաստանում:

Ծ. թ.

— Հա, լավ, հետո:

— Դուքսիշխանը դեռ Աղամ և Յեփայի վորդին եր, ապա նոյն և չդիտեմ ել ումը. հետո ինչպես ինքն տասաց Վարդոլին, Ծերեթելանց քոծի (աղախնու) վորդի և նույն Ծերեթելու թոռը: Դուքսիշխանի մորը դժբախտաբար հավանեց Ծերեթելու 18 տարեկան վորդին, սրանցից ծնվեց Դուքսիշխանը, վորը և միքիչ նոնան եր Ծերեթելուն:

Բարի բնավորությամբ, միշտ մաքուր հագնված Դուքսիշխանը սիլելի յեր ամենքին՝ սկսած մեծ պարոնից մինչև հետին ծառան և ով կարող եր մտածել՝ թե պարոնը զիմիշ կաներ նրան ուրիշին տալու: Յերկրորդ որը, յերբ իմացան, վոր Մուխրանի իշխանին ե ընծայել, այնպես նեղացան ամենքը. ինչպես իրենց հարազատ վորդու կամ յեղբոր համար:

Պատմությունը մեզ չի ասում, թե ի՞նչն եր պատճառը, վոր այդպես հեշտությամբ պարոնը զիմիշ արագ Դուքսիշխանին ուրիշին տալու. բայց տանեցիք նկատել ելին, վոր ծեր պարոնը սիրում եր նրան և հետը խաղում ու գուրգուրում: Այդ սերը նկատվեց իմիջի ալլոց և այն ժամանակ, յերբ Դուքսիշխանին բաժանում ելին մորիցը. ասում են, վոր ծեր պարոնի աջ բեղը սկսեց դողդողալ և աչքերին ել արցունք յերևաց:

Նրան ուրիշին ընծայելու պատճառ փնտողները  
յերկու կարծիքի ելին. նախ՝ իրը թե պարզնը  
դրանով ուզում եր հասկացնել վորդուն այն ան-  
կարգությունը, վորը բղխում ե աղախնու հետ  
ունեցած կապից և յերկրորդ՝ իրը թե դրանով  
ուզում եր պատժել Դուրմիշխանի մորը՝ նրա  
համար, վոր նա համարձակվեց սիրաբանել պա-  
րոնի վորդու հետ: Բայց դարձյալ նույն ծառա-  
ներն են ասում, վոր յերիտասարդ պարոնն իսկի  
չցավեց վորդուն կորցնելու համար, և հենց նույն  
որը, յերը իր հայրը ուրիշին բաշխեց նրա վոր-  
դուն, նա գնաց վորսի բազելով և շատ ուրախ  
վորս եր անում: Դուրմիշխանի դժբախտ մայրը  
մեռավ բարակացավով, վորդուց բաժանվելուց  
ուղիղ մի տարի հետո: Դուրմիշխանի հետազա  
կլանքն արդեն գիտեք նախընթաց պատմվածքից:  
Նա յել այնպես մեծացավ, ինչպես մեծանում են  
այժմ ել նրա նման անտեր տղաները, վորոնց  
կյանքով վոչ վոք չի հետաքրքրվում բոլորովին:

— Աքաղաղները յերկրորդ անգամ վոր կան-  
չեցին, Դուրմիշխանը վերկացավ, աստծու անունը  
տվեց...

— Ո՞, քո արև, իսկ թուշի\* թոփչը ե. — կան-  
չեց Ալեքսին:

\* Թուշեր—վրացի լիռնականներն են Կախեթի  
գավառում, Վրաստանում հայտնի յե թուշի պանիրը:

— Ինչ անեմ, տրամաբանության դասընթացը չեմ անցել քեզ մոտ, իմ սոսկալի փիլիսոփա, ինչ պիտի անեմ, — պատասխանեց Սիկոն բարկացած:

— Դու պատմիր, այ մարդ, դրան ականջ մէ դնի. — ասացին յերիտասարդները:

— Աքաղաղները յերկրորդ անգամ վոր կանչեցին, Դումի; խանը վերկացավ, աստծու անունը տվեց, ձին դուրս բերեց ախոռից, մաքրեց, գարի ածեց և թամքեց: Իհարկե, Գուլիսվարդին այդ միջոցին պարապ չեր, նա յել եր ոզնում Դուրմիշանին, ինչով վոր կարող եր: Աքլարի յերրորդ կանչից հետո Դուրմիշանը հուպ տվեց ձիու փորքաշը, վերցրեց խուրջինը, դուրս յեկավ և ճամպա ընկավ:

Դեպի ուր: Այն ժամանակ, վոր ալդպիսի հարց տալիք հենց իրեն Դուրմիշանին, հավատագնում եմ ձեզ, չեր կարող պատասխանել, թե ուր եր գնում: Նա ժամանակ չուներ այդ մասին մտածելու, նրա ցանկությունն եր Թիֆլիսից շուտ մեկնել, վորովհետև Թիֆլիսը և իր ճորտությունը միենույն բաներն ելին նրա համար Թիֆլիսը նրան հիշեցնում եր այն դառն որերը, վոր նա քաշեց մինչև որս: Նա ուզում եր շուտով փորձել այն կյանքը, վորի մասին մարդս իր նմանին հաշիվ չի տալիս և իր ժամանակն այնպես

ե գործադրում, ինչպես ինքն ե ցանկանում կտ  
հարմար դատում։ Յեվ ահա գնում ե իմ Դուր-  
միշխանը... Տեսեք՝ ինչ սիրուն ե ձի նստել՝ տոհ-  
մական ազնվականի նման։ Ո՞ւմնից ե վախում,  
վոր սիրուն չնստի, ով կարող ե ճախ տալ, ի՞նչ  
անենք, վոր ազնվական չեւ։

Այս և սրա նման մտքերի մեջ խորասուզ-  
ված՝ Դուրմիշխանն այնպես հասավ Զեգվի\*, վոր  
իսկի չիմացավ։ Բայց ճանապարհ գնալն ել իր  
առանձնահատուկ կողմն ունի. վորքան ուրախ  
տրամաբանությամբ լինես, այնուամենայնիվ մի-  
քանի վերստ անցնելուց հետո, յերբ միքիչ հոգ-  
նում ես, սիրոդ ցնցվում ե ու մտքերի մեջ սուզ-  
վում. այդ պահին կամ պիտի յերգես, կամ սաս-  
տիկ մտածկոտ դառնաս։

Հանդիպողը առաջինի մասին կասի՝ իրր թե  
սաստիկ տխուր ե. բայց ինչպես առաջին դեպ-  
քում, նույնպես և յերկրորդում, հանդիպողները  
սխալվում են, վորովհետեւ յերկու դեպքումն ել  
սաստիկ բանում ե ճամպորդի յերեակալությունը  
և կախված ե նրանից, թե վորքան ողալին ամ-

\* Զեգվի—գյուղ և Թիֆլիս—Բաթում յերկաթու-  
ղու զծի վրա, Թիֆլիսից 25 վերստ հեռավորությամբ։

բոցներ և կառուցում ճամպորդը, կամ վորքան բաներ ե ծրագրում, վորոնք լերեք չեն իրագործվում. բայց և այնպես նա զոհ ե, վոչ թե միայն զոհ ե, այլև նրա մեջ ե զանում իր բախտավորությունը։ Զեգվիին մոտենալիս ճիշտ այդ դրության մեջ եր Դուրմիշխանը։

Նա տեսավ սիրուն ա, տը, վորը խաղում եր քամու հետ, ինչպես ամոթխած նորահարսը՝ իր նշանածի հետ։ Քամին գգվում ե, սիրո խոսքեր և շշնջում. բայց արտը՝ այս նազելի նորահարսը իրը թե ամաչում ե և հեռացնում ե գլուխը։

Ահա և վոչխարի հոտը՝ կեսորին մի ծառի տակ հավաքված։ Նայեցեք հովվին, զորպիսի մեծ բավականությամբ ե նվագում իր սրինգը և գովում իր Մուրիալին (շուն)։ Տեսեք, թե ինչպիսի ուշադրությամբ ե լսում Մուրիան իր տիրոջը, կարծես թե ուզում ե վոչ մի խոսք չմոռանալու ամեն մի խոսք ժողովել հատիկների նման։

Ահա և տասը լծկանով գութանը իր անբաժանելի հորովելով։ Նայեցեք մաճկալին։ Կրեսոմն իր հարստությամբ չեր կարող այնքան զոհ լինել, վորքան նա այն պահին, լերը հրամալում ե հոտաղներին քշել յեզները։ Իսկ յեզնէրը. տեսեք՝ հորովելի համեմատ վոնց են դնում վոտները, ճիշտ այնպես, ինչպես լավ պարողը պարի ժամանակ լերաժառություն նվագելիս։ Իսկ մեր գո-

մեշը. Նալեք, ինչպես իմաստուն, մաքերի մեջ  
ընկղմված՝ առաջ ե զնում, կարծես թե Պիթա-  
գորոսի տեորեմա յէ վճռում։

Լսում եք հեռվից սոխակի դալացիկը. մարդ  
խուլ պիտի լինի, վոր ալդ դալալիկի մեջ  
չզգա սիրո ձայնը։ Սրտի փոխարեն քար պիտի  
ունենա, վոր իր սերը չհիշի, վորովհետեւ անկա-  
րելի յէ՝ յերիտասարդը վորևե մեկին սիրելիս  
չլինի։

Ահա այս բոլորը Դուրմիշխանին ել հիշեցրին  
այն կարճ ժամանակամիջոցը, վոր նա անցկաց-  
րեց Գուլիսվարդու հետ, կարծելով՝ թե այն ժա-  
մանակ սիրում եր նրան. իսկ այժմ, վոչ թե  
Գուլիսվարդուն եր սիրում միայն, այլ պատրաստ  
եր ամբողջ աշխարհը գգվելու։

— «Արդարեւ, ինչ լավ կլիներ, մատածում եր  
Դուրմիշխանը, վոր մի յերկ և որավար հող ու-  
նենալի, յերկու լուծ յեզն ու գոմեշ և իմ, իմ  
Գուլիսվարդուն», բայց այս մտքին փոխարինեց  
մի ուրիշ ծանր միտք, այսինքն այն, վոր այս  
բոլորը ձեռք բերելու համար փող եր հարկավոր,  
վորից նա զուրկ եր, իհարկե, քիչ ուներ նազի-  
րության ժամանակ յետ զցած, մեծ դժվարու-  
թյամբ ու անիրավ կերպով ձեռք բերած, բայց  
այդ բավական չեր իր մտադրության համար.

ուստի Դուրմիշխանն սկսեց մտածել և զգաց իր պրության ծանրությունը։

— «Եհ, ինչ անենք, աստված վողորմած ե. ասաց Դուրմիշխանն իր սրտում, այս եր դժվար, այս անիծված ճորտությունից վոր ազատվեցի, այժմ յես գիտեմ...», և սկսեց մտածել, թե ինչպիսի կյանք ընտրի։ Միքիչ մտածելուց հետո վճռեց մի վորեւե վաճառականի մոտ նոքար մըտնել։ Բայց ո՞ւմ մոտ։ Դեռ հիմի յել դժվար ե վաճառականների մոտ տեղ ճարել, մանավանդ անծանոթ մեկին, թեկուզ իմաստուն ել լինի. իսկ այն ժամանակ, իհարկե, ավելի դժվար եր, առավել ևս Դուրմիշխանի պես անտուն ու անտերի համար. բայց Դուրմիշխանն այդ տեսակ բաներից հուսահատվողների շարքից չեր։

— Ի՞նչու յեմ շատ մտածում, թե ընդունեցին վորպես նոքար՝ հո լավ, թե վոր չե, ձիս ու սարքը կծախեմ ու այն փողով և ունեցածովս մի վորեւե տեղ խանութ կբանամ...»

— Հա, հա, ինքս կդառնամ վաճառական. ինքս կունենամ նոքարներ. «Այ տղա, ածա ու բեր Տետիայի համար գինի», «չե, մալրիկ, ինքս ավելի թանգ եմ առել, ձեռք չի տա», այսպես եր յերեւակայում նա, իբր թե բան եր ծախում։ Այսպիսի մտքերով հասավ նա աղբյուրի, վորը ճամպորդների հանստյան տեղ եր. նա դեռ հաց չեր

կերել, ձիուց ցած թռավ, վար բերեց խուրջինը, ձիու վստաները բխովեց և արձակեց արածելու Բաց արավ խուրջինը, հանեց հաց ուղանիր, որփոցի վոխարեն փոեց թաշկինակն ու սկսեց ուտել:

Դուրմիշխանն առաջին անգամն եր այնպիսի հաց ուտում, վոր պարոնի սփոցի փշրանքներից չեր և պիտի տեսնելիք, թե վորքան համով եր այս: Զարմանալի յե, ճշմարիտ, մարդուս կյանքը՝ Հաճախ, յերբ նա իրեն համար կյանքի ճանապարհ ե ընտրում, դեն ե հրում, ճամպից դուրս հանում ու այլ ճամպին նետում, վորին իսկի չեր սպասում: Այսպես պատահեց և Դուրմիշխանի հետ:

Դուրմիշխանը հաց ուտելը վոր վերջացրեց, նկատեց, վոր դեռ ձին չեր հանգստացել, ուստի փոեց յափնջին ու թիկն ընկավ: Այդ միջոցին աղբյուրին մոտեցան յերեք ոսմանցիք: Դուրմիշխանը դրանց թշնամու տեղ ընդունեց, կարծելով թե թալանելու յեն գալիս, ուստի ձեռը դեպի զենքը տարավ և պատրաստվեց դիմաղրելու: Ոսմանցիք աղբյուրին մոտեցան, բարեեցին Դուրմիշխանին և նստեցին:

— Ներողություն հարցիս համար, գլխիդ դուրքան, վորաեղից եք գալիս.— հարցրեց ոսմանցիներից մինը, վորն ինչպես յերեռում եր, նրանց գլխավորն եր:

Քաղաքից եմ դալիս, — պատասխանեց  
Դուրմիշանը:

— Քաղաքացի լե՞ք:

— Զգիտեմ՝ վոնց պատասխանեմ, և այն  
տեղացի լեմ և չեմ:

— Ի՞նչպես

Դուրմիշանը պատմեց իր գլխով անցածը  
սկզբից մինչև վերջը:

— Բախտավոր ես, յերիտասարդ, — ասաց  
ոսմանցին, յերբ Դուրմիշանը վերջացրեց — ի՞նչ  
ես ուզում՝ ստրկությունից ազատվել ես առանց  
արյան, այդ տեսակ բախտավորությունը շատե-  
րին չի վիճակված. վո՞հ, աստված իմ, են յերե-  
խան ինձ հանգիստ չի տալիս, որ ու գիշեր աչ-  
քիս առաջ ե կանգնած և չգիտեմ՝ թե ուր փախ-  
չեմ... մի անգամ, յես ել ելի բախտավոր, մի  
անգամ, յես ել կարող ելի մաքուր խղճով նայել  
յերկնքին. բայց ալժմ. . մարդասպան, Քրիստո-  
սին ուրացող, յերկինքն ինչպես կարող ե հաշտ-  
վել հետո — սկսեց խոսել նա ինքն իրեն:

Դուրմիշանը նայում եր նրան զարմացած:

— Ի՞նչ եք հրամալում, յես վոչինչ չհաս-  
կացա, բացի նրանից, վոր դուք ոսմանցի չպի-  
տի լինեք:

— Վրացի լեմ, — տիսուր կերպով ասաց ոս-  
մանցին:

- Հասլու ի՞նչու յեք հաղել ոսմանցու հագուստը, կամ ինչու յեք նրանց պես վարվում:
  - Այլ և այլ պատճառներից դրդված:
  - Թե վոր անքաղաքավարություն չեք համարի, կարելի յե իմոնալ այդ պատճառները:
  - Պատճառները, — մտածելով ասաց ոսմանցին. բաշլուզը յետ քաշեց ու սրբեց քրտինքը. — պատճառները, ինչու չե. դու քո կյանքի մասին պատմեցիր, յես ել իմս պիտի պատմեմ. ասում են, վոր յերբ դարդերդ ուրիշին պատմում ես, դառնությունդ կիսվում ե, յես ել կփորձեմ, յերիտասարդ, կաշխատեմ գլուխդ չցավեցնել.
  - Վոչ, քեզ մատաղ, ի՞նչ եք հրամալում:
  - Այժմ իմ անունս ե Ոսման աղա. — սկսեց ոսմանցին:
  - Վաղը, վաղը, — կանչեցին տղերքը, — վաղը Աղեքսին կպատմի, — ու լոեցըին Սիկոլին:
- 

### III

## ՌՍՄԱՆ-ԱՂԱ

Գիակ յեղին,  
Յեղվիտական կանոն,

- Յերիտասարդ, ձեր անժւնը:
- Դուքմիշխան:

— Արագվալի \*) ձորով լերբեկիցե ճանապարհորդել եք:

— Վոչ, չեմ լեզել:

— Ուրեմն դու չես տեսել մեր սիրուն աշխարհի կողմերից մինը, գոնե ինձ համար սիրուն. Այս Արագվալի ձորում, հենց Արագվալի ափին, Բորդոնի և Նաողի միջև, Արագվալի մյուս ափին կա Գ. գյուղը: Այս գյուղը թեև փոքր ե, բայց մեծ ե լերեռում ալգիների շնորհիվ:

Այս գյուղն իշխանական եր. սրա մեջ եր ապրում տարաբախտաբար և հալրս, վորպես ճորտ: Ինքն աշխատասեր և լերկու զույգ լծկանի ու միքանի կթան կովի տեր եր. ուներ նաև լերեք որավար ալգի:

Հալրս մեր գյուղում առաջնակարգ մարդ եր համարվում և վոչ մի գանգատ կամ մի վորեե հարց՝ գյուղին վերաբերյալ, չեր վճռվում, մինչև հարեանները Զալիկալին չհարցնեցին — այսպես եր հորս անունը: Ա՛յս, ինչ լավ եր այն ժամանակը, վորպիսի բավականությամբ ելի լծի վրանստում և անհոգությամբ լերգում հորովելը. այդ ժամանակն անցավ, ժամանակ անմեղության և մաքուր խղճի:

---

\*) Արագվա — Կուր գետի վտակներից մինն ե, վոր միանում ե նրա հետ՝ Վրաստանի պատմական մայրաքաղաք Մցխեթի մոտ:

Ծ. Թ.

Այն յերիտասարդը, վորին մաճկալը հրամացում եր հորովել յերգել, և ընկերները նախանձով ելին լսում նրա յերգը, այժմ Ռսմանլուի յանիչարների հարյուրապետն ե, բայց մեծ հարստության տեր և քրիստոնելի արյան մեջթաթախված. այս, մեծ ուրախությամբ յես կթողնելի այժմ իմ ունեցած ամեն տեսակ բարիքս, միայն թե կարողանալի հետ դարձնել նախկին ժամանակս, յերբ յես ցերեկվա հոտաղ ելի, և այդ աշխատանքի համար վարում ելին մի որավար հողս. բայց մեր բախտավորությունը յերկար չտևեց: Մի անգամ հայրս գնաց խուրձ կրելու. սայլը պիտի իջներ զառիվայրով. հայրս սովորաբար սայլի առջեկից եր գընում, վոր սայլը պահեր. բայց սայլը գլորվեց, հայրս չկարողացավ տավարի գլուխը պահել, գոմեշները վայր զցեցին նրան և սայլի տակ ճխլտվեց: Նրա մահվանից հետո մեր ոջախը տակն ու վրա յեղավ:

Պարոնը նախ խլեց մեր այգին, իրը թե ել չելինք կարող կարգին մշակել, հետո՝ մեկ-մեկ մեր ունեցած տավարը, իսկ վերջն ել հրամայեց մորս իր տանը քոծ (աղախին) լինել: Խեղճ մայրս, պիտի տեսնելիք ինչ կսկիծով եր: հրաժեշտ տալիս իր տանը. ոհ, աստված իմ, թշվառ մայրս ինչքան եր թախանձում պարոնին՝ թուլ տալ իր ո-

ջախում ապրելու. բայց դուք, պարոնը չլսել եք  
ձեացնում:

— Լաց կլինի, լաց կլինի ու կլոի. — ահա ճոր-  
տատերերի կարծիքը. նրանք կարծում են, վոր  
մենք մարդիկ չենք, կամ չզիտենք ինչ բան ե  
սերն ու ատելությունը. նրանք կարծում են, թե  
մենք սիրտ չունենք կամ աշխատել չզիտենք:

— Խնդրում եմ, վորպես մայր և վորդի, ձեր  
վորդոց արևշատության համար, իսեր աստծու,  
թողեք ինձ հանգիստ, թողեք ինձ. աղաչում եր  
մայրս. — Ի՞նչպես պիտի ծառայեմ ձեզ, յերբ ձեր  
իշխանական կրանքի վերաբերյալ վոչինչ չզիտեմ.  
վորդիքս դրսից ավելի լավ կարող են ծառայել  
ձեզ. ինչ բերք կստանանք, բոլորն ել ձեզ կու-  
դարկենք, մենք մոխիր կլսառնենք ջրի հետ ու  
են կուտենք, միայն թե մեր ոջախը մի քանդի.  
ախ, խեղճ բալիկներս. — և նա այնպես պինդ սեղ-  
մեց մեզ կրծքին, կարծես թե գերեզման ելին  
դնում մեզ:

— Այ կին, յես շատ խոսել չեմ սիրում,  
վաղվա համար պատրաստ պիտի լինես, — հրամա-  
յեց պարոնը և ծիծաղեց, վորովհետեւ մի բարակը  
ինչ վոր ծիծաղաշարժ բան արեց. Վոհ, ինչ զաղ-  
րելի յեր այն ծիծաղը մորս կսկիծի հանգեպ.  
յես հավատացած եմ, վոր վոչ թե մարդ եր ծի-  
ծաղում, այլ մարդու մեջ հրեշը, վորովհետեւ այդ-

սղիսի ժամանակ միայն հրեշը կարող է ծիծաղել:  
Ել ինչ զլուխդ ցավեցնեմ շատ խոսելով, մյուս  
որը լցրին մեզ սայի մեջ և տարան պարոնանց  
տուն։ Աղջիկ պարոնին վոր ներկայացանք, նա  
զննեց մեզ և հրամայեց, վոր յես ու քույրս նրա  
յերեսի սպասավորներ լինենք, իսկ մայրս հաց-  
թուխ։ Ահա այսպես տեսեց մեր կյանքը համարլա  
թե հինգ տարի։ Դու ինքդ ել ծառա յես յեղել,  
լավ կզգաս, թե ինչպես պիտի տանջվելինք այդ  
պաշտոնում։ բայց ասուն են, վոր մարդս դժոխքին  
ել ե ընտելանում։ մենք ել ընտելացանք մեր կյան-  
քին և համարյա թե դո՞հ ելինք, շատ կարելի յե  
նրա համար, վոր ավելի վատթար կյանքն եր մեզ  
սպասում։ Մի անգամ մեր պարոնի մոտ կախեթից  
յեկավ մի քահանա. ընթրիքին սպասավորելու  
ժամանակ պարոնս նրան աչքով արավիմ մասին.  
քահանան զննեց և սկսեց պարոնի հետ ծածուկ  
ինչ վոր խոսել։ Զգիտեմ ինչու, բայց զննելու  
ժամանակ դողն ընկավ ջանս և մաղերս բիզ-բիզ  
յեղան։ Սիրտս զգաց, վոր ինձ ինչ վոր դժբախտու-  
թուն և սպասում։

Հետեւալ որը պարոնս կանչել տվեց մորս և  
հրամայեց. վոր ինձ ու իմ քրոջս պատրաստի այն  
քահանայի հետ գնալու համար։

— Ի՞նչու, ձեր ցավը տանեմ։

— Ի՞նչու, ծախեցի, այ ինչու։

Իհարկե, այս գուլթը յես այնպես ընդունեցի, իբր թե առաջուց զիտելի ու այդ մտքի հետ ընտելացել ելի, և վորովհետևինձ զարմանալի չթվաց, մայրս ել լաց չեղավ. միայն թե մի քիչ շնչվեց, գլխիցս բռնեց ու կրծքին սեղմեց. զգացի, վոր նրա ձեռքերը դողղողում ելին և սառուցի նման սառն ելին:

Միքանի ըոպելից հետո մայրս գետին թավալվեց և սկսեց աղաչել-պաղատել պարոնին այնչափ ջերմագին, ինչպես կարող ե խնդրել մի մայր իր վորդու համար, յերբ նրանից խլում են հավիտենապես:

Պարոնը հրամայեց ծառաներին, վոր նրան դուրս անեն: Մայրս վերկացավ ու դուրս դնաց, միայն թե հարցրեց պարոնին, թե վոր որվա համար պատրաստել: Պարոնը հրամայեց՝ մյուս որվա համար:

Կես գիշերին; յերբ ամենքը քննեցին, մայրս վերկացավ, թագուն զարթեցրեց ինձ և խրատեց, թե վորտեղ պիտի սպասեմ իրեն, ու դուրս ուղարկեց: Մի քիչ հետո մայրս յեկավ մոտս, քրոջս հետ միասին:

— Ապա, վորդիքս, աստծու անունը տանք ու ճանապարհ ընկնենք, — ասաց մեզ մայրս, խաչակնքեց մեզ և առաջ ընկավ:

Աշնանալին գիշեր եր, մառախլապատ ու մութ:

Մայրս մտածել եր, յեթե վորոնելու համար մեզ  
հետամուտ լինեն, կսկսեն վորոնել մեզ ավելի հետ-  
ընկած տեղերում ու անտառում, ահա այդ պատ-  
ճառով քաղաքի\* ճանապարհը բռնեց: Լուսածեղին  
հասանք Դարթիսկարի ճահճուտը: Այստեղ մայրս  
մեզ նստեցրեց մի մեծ կաղնու վրա, վորն ու-  
րիշներից ավելի տերեւախիտ երև պատվիրեց, վոր  
լուռ կենանք:

Ամբողջ որն անցկացրինք այդտեղ և յերբ  
մթնեց, իջանք ու յեկանք քաղաք:

Ես զարմանում եմի, թե ինչու պարոնը մեր  
յետեից չընկավ, կամ ինչու մայրս մեզ քաղաքի  
կողմը տարավ և վոչթե Փշավի\*\* կողմը, վորտեղ  
մայրս մորեղբայրներ ուներ. վերջը յերեաց, վոր  
պարոնը բարակներով մեզ փնտռելիս եր յեղել  
Փշավի կողմում: Մայրս այդ գիտեր, դրա համար  
ել մեզ քաղաքի կողմը տարավ:

Յերբ քաղաք հասանք, ապրուստի կողմից  
մի շաբաթ մեծ նեղություն կրեցինք, քիչ եր  
մնում քաղցից մեռնեցինք գյուղեց ինչ վոր պա-  
շար վերցրել ելինք, յերբորդ որն և յեթ սպառվեց.

---

\*) Քաղաք ասելով Վրաստանում Թիֆլիսն և հաս-  
կացվում:

\*\*) Փշավներ — վրացի լեռնականներ են Դուշեթի  
կողմում:

ստիպված մուրացկանություն սկսեցինք, բայց  
վոչ վոք վոչինչ չեր տալիս, նաև՝ մուրացկանու-  
թյան համար վարպետություն ե հարկավոր, վոր-  
պեսզի խղճան, դրանից մենք գուրկ ելինք, և յեր-  
կըորդ՝ մարմնի վորեե մասի պակասություն ել  
չունելինք, վոր ժողովրդի գութը շարժել կարո-  
ղանալինք: Սակայն աստծու նախախնամությունը  
մարդուն վոչ մի տեղ անմխիթար չի թողնում:  
Մի շաբաթից հետո մայրս ինձ տվեց ծառայելու  
մի հույնի. իսկ ինքը վարձեց Քարափի թաղում  
մի փոքրիկ սենյակ և սկսեց հաց թխելուրիշների  
համար: Մոռացա ասել, մայրս իրեն հայ ան-  
վանեց և բոլորիս անունները փոխեց: Իրեն ան-  
վանեց՝ Մարթա, ինձ Կարապետ, իսկ քրոջս Շու-  
շան: Ահա ալսպես ապրեցինք հինգ տարուչափ:  
Քույրս մեծացավ, նրան ամուսնացրինք մի հայի  
հետ: Ամենքս հայոց ժամ ելինք գնում, բայց  
վոչ մայրս և վոչ յես հայոց ժամում չենք ճա-  
շակվել այդ հինգ տարվա ընթացքում. յերբ իմա-  
նում ելին, վոր մենք վրացի յենք, չելին ճաշա-  
կում: Վրաց յեկեղեցումն ել չելինք համարձակ-  
վում ճաշակվել, վախենում ելինք, վոր կճանաշեն  
մեզ: Մի անգամ, աստվածածնի պասին, մայրս  
սկսեց թե անպատճառ պիտի ճաշակվեմ: Յես  
խնդրեցի, վոր քահանալին իր ծագման մասին  
վոչինչ չհայտնի: Մայրս խոստացավ, բայց յերե-

վում ե՞լիդի գեմ չի գնացել և խոստովանվել  
եր բոլորը։ Հենց խոստովանության որը, ինչվոր  
մարդիկ հարձակվեցին մեզ վրա, ձեռքերս կապ-  
կապեցին ու քշեցին առաջ։ Տանելու ժամանակ  
խեղճ մայրս ամաչում եր ինձանից և աչքերով  
ներումն խնդրում իր արած սխալի համար։  
Թշվառ մայր։

Պարոնի մոտ վոր տարան, նա զանազան  
սաստիկ տանջանքներից հետո հրամայեց ծառա-  
ներին, վոր գութան լծեն մեզ, ճիշտ այնպես,  
ինչպես լծում են յեզները։ Յեզան լուծը դրին  
վզներիս, բայց այս պատիժը պարոնը թույլ  
համարեց, վորովհետեւ յեզները գութանում շատ  
դանդաղ ելին քայլում, և մենք չելինք հոգնի։  
Մյուս որը նա մեզ լծեց կամը. ինքը նստեց  
կամի վրա և սկսեց քշել մեզ անդադար։ Յեթե  
մի քիչ կանգ առնելինք շունչ քաշելու համար,  
իսկույն ճիպոտն եր վրա հասցնում։ Պարզ ե, թե  
վորքան կարող ե մարդս վազ տալ, այն ել այն-  
պես թուլացած, ինչպիսին եր մայրս. նա տաս  
անդամ պտտվեց առանց վորեւ տրտունջ հայտ-  
նելու, բայց տասմեկերորդի վրա մայրս  
հանկարծ վայր ընկավ և մեռավ։ Խեղճ մորս մինչև  
խել չթողին, վոր հանգիստ մեռներ Պարոնին այն-  
պես թշվաց, թե խաբում ե, սկսեց թակել նրան

ճիպոտով, վոր վեր կենաւ: Ահա այսպես ճիպոտի  
հարփածների տակ փչեց հոգին:

— Տղերք, յետ արեք դրան ել, հո տեսնում  
եք, ել ընկեր չունի.—ասաց պարոնն իմ մասին:

Տղերքը բաց թողին ինձ. յերեկոյան սաս-  
տիկ տաքություն տվեց, մինչև կես գիշեր տանջ-  
գում ելի. կարծում ելի, թե կենդանի տեղովս  
ինձ դժոխք նետեցին: Կես գիշերից հետո ել  
բան չելի հիշում: Հիվանդացել ելի սև հարին-  
քով: Դեռ թեթև բանով ել վոր հիվանդանալի,  
ով եր իմ տերը կամ խնամողը. վժը սիրտը  
պիտի ցավեր ինձ համար, իսկ հարինքի այդ  
սարսափելի վարակիչ հիվանդության ժամանակ  
ով պիտի մոտենար ինձ: Բայց չզիտեմ, թե ինչ-  
պես, յերեք շաբաթից հետո ուշքի յեկա: Մի  
տիմար կին, վոր յերեկի չեր հասկանում, թե  
ինչ ե կյանքը, կամ մահը, կամ հիվանդությունը,  
խնամելիս ե յեղել ինձ իմ հիվանդության ժա-  
մանակ:

Նա պատմեց, վոր բացի ինձանից հիվանդա-  
ցել ելին և ուրիշները: Պարոնիս տանն այդ հիվան-  
դությամբ վախճանվել ելին յերեք հոգի, սրանց  
թվում և պարոնի անդրանիկ վորդին:

Փախուստից հետ բերելուց հետո անցավ  
յերեք տարի: Պարոնս հաշտվեց ինձ հետ, յերեկի  
նրա համար, վոր յես նրան պետքական ելի:

Այս ել պիտի տաեմ, նա իմ մեջ հավատարձություն եր վորոնում և հավատացած եր, վոր յես նրան հավատարիմ ելի. հա, հա, հա, հավատարձություն եր վորոնում նրա մեջ, վորի մորը նա սպանեց լծի տակ... զարմանալի յեն, քո արե, այդ տեսակ մարդիկ:

Յես դարձա 23 տարեկան։ Այդ ժամանակ իմ աղջիկ-պարոնս ուներ Նատո անունով մի տղախին - շագանակագույն յերկար մազերով, բամբակի նման սպիտակ դեմքով, միքիչ խոշոր շրթունքներով, սիրուն, սպիտակ ատամներով. բոյն ել՝ միջակից մի քիչ ցածր ու բարակ. Իսկապես սիրուն եր Նատոն, բայց ինչն եր նրա մեջ ավելի սիրուն, յեթե վոչ նրա աչերը. չգիտեմ, ինչպես նկարագրեմ նրա աչերը։ Մի տեղ վոր յերկար ժամանակ յեղած լինես և ապա վերադառնաս, նկատել ես, թե ինչպես ե նայում մայրդ քեզ։

— Յես մորս չեմ հիշում. — պատասխանեց Դուրմիշանը։

— Հա, ներողություն, մոռացաւ Նատոյի աչերը ճիշտ այդ ձևով ելին նայում. Այն աչերը յերկնագույն ելին և լի խորհրդավորությամբ, ինչպես յերկինքը։ Նա վոր նայում եր, կարծես թե գուրզուրում եր, կարծես թե ինդրում եր իրեն խղճալ, կարծես թե ասում եր՝ ինչ լավ

մարդ ես: Յերբ Նատոն ինձ նայում եր, յես  
ընկնում ելի կատվի դրության մեջ, յերբ նրա  
մեջքին ձեռք են քսում: Յերբ նա ինձ նայում  
եր, յես աստծուն աղաչում ելի, վոր յերկար  
նայեր ինձ. բայց խեղճ նատոն ուրիշ քոծերի  
նման չեր, վոր ամենքին նայեր: Յես հավատա-  
ցած եմ, վոր բնությունը սխալվել եր՝ ծնելով  
նրան վորպես աղախին, իսկ աղջիկ-պարոնիս—  
աղջիկ-պարոն:

Մի անգամ յես ու Նատոն աղջիկ-պարոնի  
սենյակումն ելինք: Աղջիկ-պարոնը, չգիտեմ ին-  
չից չարացած՝ Նատոյին հրամայեց ինչ-վոր բան  
բերել: Նատոն վազ տվեց, բայց շուտ չկարո-  
ղացավ ուզած բանը գտնել:

— Այ, դու, շան վորդի, աննամուս,—բար-  
կացավ աղջիկ-պարոնը Նատոյի վրա, հենց վոր  
նա ներս յեկավ.—աբա ուտելու բան լինի, թե  
շուտ չգտնես. ինչի՞ համար եմ սիրտս մաշել  
տալիս սրանց, ինչի՞ համար, կծախեմ քեզ, ան-  
նամուս, ել չեմ կարող քեզ դիմանալ:

— Աղջիկ-պարոն, հոգուդ մատաղ, ներե-  
ցեք, շուտ չկարողացա գտնել, պարոնիս արևով  
եմ յերդվում:

— Տես, տես, ես անամոթին, յերբ ուզում  
ե սուտ յերդվել, իսկույն պարոնի ոձիքից ե  
բռնում:

— Վոչ, ասաված վկա... — և լացը խանգարեց, վոր վերջացներ խոսքը:

Յես չկարողացա այս նալել ու դուքս յեկա:

Մի փոքր հետո Նատոն ել դուքս յեկավ:

— Նատո, շատ ե նեղացնում քեզ աղջիկ-պարոնը, — հարցրի տիրած:

— Այնքան, վոր քիչ ե մնում ինքնասպան լինեմ, — պատասխանեց նա և սկսեց լալ:

— Մի լար, Նատո, ասաված վողորմած ե, ինչ ուզենաս ինձանից պահանջիր, ինչով վոր կարող եմ՝ կողնեմ. սրանից հետո — դու քուլը, յես յեղալը, յես ել քեզ նման վորբ ու անտեր եմ.

Պիտի տեսնեիք, թե այն միջոցին ինչպիսի շնորհակալութլամբ նալեց Նատոն ինձ:

— Յեղալը, — ասաց Նատոն, ձեռս բռնեց, համբուրեց ու ներս փախավ կարմրած:

Միրտս չցնցվեց այնպես, ինչպես ցնցվում ե քըոջ համբուլըի ժամանակ: Այն հասակում, վորի մեջ գտնվում ելինք յես ու Նատոն, ոտար անձանց քուլը-յեղալըությունը վերջանում ե ամուսնությամբ, յեթե արգելք չկա: Ինչիդ ե պետք, վոր պատմեմ քեզ իմ սիրո զառանցանք-ների մասին և ճիշտ ասած՝ այժմ չեմ ել հիշում:

Մեր սիրահարվելուց հետո բավականին ժամանակ անցավ:

Մի անգամ հարմար ժամանակ գտա և խնդրեցի պարոնից պսակի իրավունքը:

— Ինչեր ես դուքս առաջիս, պատակ, չե՞, հորդ  
ողորմի:

— Ցավդ տանեմ, պարոն ջան:

— Ում հետ ես պատակվում:

— Խնդրածս այդ ե, աղջիկ-պարոնի քոծի  
հետ:

— Աղջիկ-պարոնի քոծի հետ:

— Այո:

— Այո,—ծաղրեց ինձ պարոնը,—այս, ել ու-  
րիշ քոծեր չկան, վոր տանեց-տանու չփնտուես:

— Ի՞նչ անեմ, ցավդ տանեմ, նրան հավանեցի:

— Ի՞նչ, հավանեցիր, հավանեցիր, կարծես  
թե պարոնի վորդի լինես, հորդ ողորմի, ուրիշ  
ել ինչ հավանեցիր:

— Պարոն...

— Գնա, կորիր, չի կարելի, աղախնուն  
տանիցս չեմ թողնի և զոչ ել քեզ կտամ իրա-  
վունք, դու յել ես պետք տանը:

Ինչ պիտի անելի, թշնամիդ ընկնի այն որը,  
ինչ գրությամբ վոր յես դուքս յեկա պարոնի  
սենյակից: Դու մի ասի, նատոն դուքսն սպա-  
սում եր, թե ինչ պատասխան դուքս կըերեմ:  
Ինձ վոր տեսավ դուքս յեկա, ել բան չհարցըեց,  
սկսեց լալ:

Այս իմ խոսակցությունը, վորից յես սպա-  
սում եմի բախտավորությունս, դարձավ դժբախ-

տության աղբյուրը, ասեմ՝ ինչպես։ Մինչև այդ  
ժամանակ պարոնս իսկի որինավոր նատոյի վրեն  
չեր ել նայել և նատոն ինքն ել քաշվում եր  
պարոնից, բայց իերբ յես ինդրեցի նրա հետ  
ամուսնանալ, այն ժամանակ ուշադրություն եր  
դարձրել ու հավանել։

Մի անգամ մեն-մենակ նատած մտածում  
ելի, թե ինչ հնարքով հաջողեցնեմ նատոյի հետ  
ամուսնանալ, հանկարծ նատոն ընկավ վզովս։

— Նոդար, աստծու սիրուն, ոգնիր, ի՞նչ  
անեմ, մեր պարոնն ուրիշ կերպ ե նայում ինձ,  
կարծես սիրաբանում ե, այնպիսի աչքերով ե  
նայում վրես, վոր յես սոսկում եմ, ի՞նչ անեմ, ասա։

Այս խոսքերի վրա մազերս բիզ-բիզ կանգնե-  
ցին և արյունը խփեց գլխիս։

— Խուսափիր և շուտ-շուտ մի հանդիպիր,—  
ասացի յես։

— Այդ յես ել՝ գիտեմ, ինձ մեռած տեսնես,  
յեթե յես ուշադրություն դարձնեմ նրա սիրա-  
բանության վրա, բայց և այնպես ի՞նչ անեմ։

— Ինքն աստված ցույց կտա։

Նույն որը պարոնը նորից սկսել եր նատոյի  
հետ սիրաբանություն։ Նատոն, իհարկե, ուշք չեր  
դարձրել։ Յերեք շաբաթ անցավ, պարոնը ել  
բան չեր ասել նատոյին։ Յերեք շաբաթից հետո  
պարոնը կանչեց ինձ, տվեց մի նամակ և հրա-

մալեց տանել քաղաք իր մի բարեկամի մոտ և  
այնտեղից պատասխան բերել։ Վերցը ի այն նա-  
մակը և գնացի քաղաք։

Դու մի ասի՝ այն նամակում գրված ե լեղել,  
վոր ինձ լերեք շաբաթ քաղաքում պահեն Յե-  
րեք շաբաթ անցնելուց հետո կարդացին նամա-  
կը և ասին, վոր գնամ գյուղ։ Յես իսկույն հաս-  
կացա, թե ինչու համար եր սարքված այս բո-  
լորը։ Դյուղի ծալըրին հասա թե չե, պատահեց  
մի պառավ կին։

— Իսեր աստծու, ասա, մեր նատոն ի՞նչպես ե։

— Եհ, վորդի, ել մի հարցնի, թշնամիդ  
լինի, ինչ հալում վոր նա լե։

— Ի՞նչ ե պատահել, մալըրիկ, ասա շուտ,  
— շփոթված հարցը իսս։

— Այ, ինչ ե պատահել. մեր պարսնն  
սկսել եր սիրաբանել նրա հետ. անիծվածը, հոր-  
դորելով վոր բան չեր դարձել, բռնաբարել եր  
և ահով ստիպելիս ե լեղել, վոր իրեն սիրեր։  
Խեղճ աղջիկը վորքան կարողացել եր, համբերել  
եր, բայց հետո համբերությունից դուրս եր լե-  
կել և իրեն ձգել ջուրը։ Նաոզի ակունքում  
դտան թշվառին։

Վերջին խոսքերն այս չլսեցի, սաստիկ  
զալըրացած ներս ընկա պարոնի մոտ։

— Այ տղա, ի՞նչ խաբար ե. — բացականչեց  
նա. — լերեսդ սատանին ե նման։

— Վոչինչ, մւր և նատոն:

— Սատանան գիտե դլուխտ, զիփ դու լիս  
մեղավոր, շուն, շան վորդի, անպատճառ - դու....

Յես չթողի, վոր խոսքը վերջացներ,  
հարձակվեցի դաշունով նրա վրա:

— Ի՞նչ ես անում, տո՛, շան վորդի, ոգնեցեք,  
սպանեց. — բղավեց պարոնը:

Այդ եր նրա վերջին խոսքը հետո սկսվեց  
մահվան խոխոցը:

Պարոնի աղաղակի վրա դուրս ընկավ աղ-  
ջիկ-պարոնը, այդ տեսարանը վոր տեսավ, գոռաց  
ու ներս փախավ իր սենյակը: Նրա ձայնն ինձ  
հիշեցրեց, վոր դեռ ելի կան այնպիսները, վորոն-  
ցից յես վոխս պիտի հանեմ և ընկա նրա յետե-  
վից ել: Սենյակ վոր ներս ընկա, տեսա, վոր  
աղջիկ-պարոնը փարվել եր վորդուն՝ պաշտպան-  
վելու մտքով:

— Նոդար ջան, ինձ սպանիր, Գիգոյիս մի  
սպանիր, նա քեզ վոչինչ չի արել, — ասաց՝ աղա-  
չելով աղջիկ-պարոնը:

Բայց յես նրա աղաչանքն այլիս չեցի լսում.  
արյունից խելագարված՝ յես սպանեցի մորը վոր-  
դու հետ միասին:

Ապա դուրս ընկա, ձի ննտեցի ու փախա:  
Ինձ հետեղը հասավ ինձ յերեկոյան. բայց վոչ  
նա և վոչ մյուս հետեղները վոչ թե բոնեցին

ինձ կամ սպանեցին, այլ ընդհակառակը սովորեց-  
րին, վոր Ախալցխի կողմը փախչեմ։ Յեվ ճիշտ,  
յես լսեցի նրանց խորհուրդը և յերբորդ որը  
հասա Ախալցխա։ Այստեղ իսկուն ներկայացա  
մուֆթիին ու համանեցի ցանկությունս նրանց  
հավատն ընդունելու։ Հետեւալ որը մեծ հանդի-  
սով ընդունեցի մահմեղականությունը և ուրա-  
ցա Քրիստոսին։ Ոսմանցի մեծամեծները տվին  
ինձ պարգևներ և խորհուրդ տվին գնալ Ստամ-  
բոլ ու մտնել յանիչարի զորքը ծառայության。  
գնացի Ստամբոլ և մտա ծառայության։ Պիտի  
ասեմ, վոր այնտեղ կյանքս, ըստ յերկութին,  
շատ լավ եր ընթանում, բայց ինչեր եր անցնում  
սրտովս, այդ միայն աստված գիտե։

Անմեղ մանկան սպանությունը, մանավանդ  
քրիստոնելության ուրացումը, ինձ հանգիստ չե-  
լին տալիս, ալժմս ել հանգստություն չունեմ։  
Ուրախության մեջ, քնած ժամանակ, պատե-  
րազմում, ամեն տեղ, արյունի մեջ շաղաղված  
յերեխան առաջս ե կանգնում և ասում ժպտալով։

— Յես ի՞նչ արի, ի՞նչու սպանիր ինձ։

Քանի անգամ պատերազմում մահ ցանկացա,  
քանի անգամ խելագարի նման ներս եմ ընկել  
տաք կռվի մեջ, վոր շուտ վերջ տամ կյանքիս, բայց  
թշնամու գնդակը չեր գտնում ինձ և մահվան  
փոխարեն ձեռք բերի քաջության և անվեհերու-

թյան հռչակը և ապա՝ հարյուրապետությունը:  
Բայց և այնպես խիղճս չհանգստացավ: Վերջը,  
վորպեսզի այդ մտքերն ինձնից վանելի, յես  
սկսեցի վաճառականություն անել. փող աշխա-  
տեցի, բայց և այնպես խիղճս չհանգստացավ:

— Իներես, արդյոք, յերբեկցե մեղքերս,  
աստված. — ասաց նա մտածկոտ, և ինքնիրեն վրա  
բերեց. — խորհրդավոր մի ինչ վոր ձայն ասում  
է, վոր վնչ:

— Աստված վողորմած ե, — ասաց Դուրմիշ-  
խանը, յես լսել եմ, վոր չկա մի վորեե հան-  
ցանք, վոր չներվի, յեթե մաքուր որտով ապաշ-  
խարենք:

— Վոչ, ինձ համար թողություն չկա,  
— մտածկոտ կերպով ասաց Ոսման-աղան. — Թո-  
ղությունը չի յերեսում:

— Մի՛ հուսահատվիր, աստված ամենա-  
դուժի ե, կրկնեց Դուրմիշխանը:

— Եհ, բավական ե, ներողություն, ձանձրաց-  
րի, — տխուր ձայնով ասաց Ոսման-աղան և հրա-  
մայեց տղերանց ձիաները պատրաստել:

— Կարծում եմ, դու յել մեզ հետ կդաս,  
— դիմեց նա Դուրմիշխանին, — ճամպին կխոսենք  
քո ապագա կյանքի մասին:

— Այո, յես ել ձեզ հետ եմ գալիս:

Միքանի ըոսկելից հետո նստեցին ձիաներն  
ու գնացին:

Ցավի այնտեղ թողի, ուրախությունը ձեզ  
բերի:

— Ոհո, այդ դու չպիտի ասելիք,— ասացին  
Ալեքսուն, յերբ սա վերջացրեց:

— Բաս ով պիտի ասեր:

— Ազատամիտ իշխանը:

Ազատամիտ իշխան կանչում ելին իշխան  
է. Դին, վորովհետև սա յեր, վոր ի սրտե ու-  
ղում եր ճորտերին ազատություն տալ և ինչ-վոր  
ճորտատիրության վերաբերյալ նոր լուր կար,  
ամենից առաջ սա յեր տեղեկանում:

— Վաղը պատմի դու...

— Վաղն ազատամիտ իշխանը կասի. պատ-  
րաստվիր, ազատամիտ իշխան, բայց բարձր մըտ-  
քերի լետեից չընկնես:

— Ձեր ջգրու ճորտատիրության մասին իսկե  
բան չեմ ասի,— ասաց ազատամիտ իշխանը:

#### IV

— Սանահեր, վճռիր, մի վախենար:

— Հմ, ա կնիկ, շուռ տուր այդ խորովածը,  
դիմ այրվեց:

— Լավ, խոսքը կտուրը մի գցի, քեզ եմ  
տառւմ:

— Ի՞նչ, քեզ մատաղ:

— Վճռիր, սանուհուս մարդու տանք:

- Պատրաստ եմ, թե վոր ուղող կլինի:
- Այս յես միջնորդ կլինեմ:
- Վոչ, հոգուդ մատադ, վոչ. յես նրան

**Հեմ տա:**

- Ինչու:
- Զգիտեմ, նախ նրա համար, վոր եհ, պատճառներ շատ կան, ապա թե վոչ, ի՞նչու չե:
- Ի՞նչ պատճառ, լավ տղա չի:
- Տղեն լավ ե, բայց...
- Բաց թող այդ բայցերը:
- Բայց անտուն-անտեր ե:

Այս խոսքերից առաջին խոսողը կնճռուավեց,  
կարծես թե մեկը նրան խալթեց:

- Ինչ վսաս, վոր վոչ վոք չունի, դրա համար լավ տղա չի, յերկու տարի յե միայն, ինչ վոր ինձ մոտ ե, հարցուը թումանի չափ փող ճարեց, լավ չե:
- Լավ ե, բայց դու լավ գիտես, վոր յես այդ աղջկանից ավել ուրիշ վորդի չունեմ, ուզում եմ մի որինավոր մարդու տամ:
- Ո՞վ ե քո հաշվով որինավորը:
- Նա, վորին աստված կտա: Յես ուզում եմ մի խեղճ ազնվականի տամ:

Այստեղ առաջին խոսակիցը կրկին ալլալլ-վեց, կարծես սրտից մի բան պոկեցին:

- Ի՞նչ վսաս, վոր ազնվական չլինի:

- Ազնվականն այլ բան ե, քավոր ջան. մի մի աղախին ու ծառա գոնե կունենա, ջուր կըողը կամ հաց թխողը ինքը չի լինի:
- Կարծում ես, նրա կինը հաց կթխի, միթե նա չի կարող ծառա և աղախին ունենալ:
- Ինչու չե, բայց նա փող պիտի վճարի, իսկ ազնվականը սեփական կունենա:
- Յեթե ալդպես ե, վաղն և յեթ կառնեմ ճորտեր նրա համար:
- Առ, աստված հաջողություն տա:
- Հետո կտաս, չե՞:
- Զգիտեմ, բարեկամություն չունի, քավոր, բարեկամություն, յես ել ոջախի տեր եմ, թշնամի և բարեկամ ունեմ, յել ել եմ ուզում մարդամեջ յերեալ թե փեսալով և թե բարեկամ-ներով:
- Այդ բոլորը զուր ե, սանահեր, այնպիսի հարսանիք անեմ, վոր առաջնակարգ իշխանն ել ունեցած չինի:
- Դրանից ինչ դուրս կգա:
- Են դուրս կգա, վոր առժամանակ թըշ-նամիներիդ աչքը կհանես. հետո Դուրմիշխանը կը կին կսկի վաճառականություն անել, փող կվաստակի, խոմ գիտես՝ փողն ինչ կարող ե անել:
- Փողը ծագումը չի կարող փոխել:
- Ճիշտ ե, բայց վոր լավ ծագում ունե-

ցողները նրան յերանի տալիս լինեն և գլխին  
կանգնած փող ուղելիս լինեն նրանից փոխարի-  
նաբար:

— Եհ, դու ելի քոնն ես ասում, ել ով կա-  
րող ե քեզ հետ խոսել:

— Ճիշտ չեմ ասում:

— Ճիշտ ե, բայց վորպեսզի Դուրմիշխանն  
այնպիսիներից լինի, ինչպես դու յես ասում, նա  
շատ հարյուր թումաններ պետք ե ունենա:

— Կունենա:

— Վորտեղից:

— Իրա տղամարդությամբ... և յես գիտեմ,  
թե ինչով, յես կտամ իմ կարողության կեսը:

— Ի՞նչու:

— Են յես գիտեմ, ասի վոր աստծու ճամպով  
եմ ուզում զնար կարելի յե արժանի լինեմ թո-  
ղության:

— Ելի սկսեցիր, յերբ պիտի վերջ տառ  
զառացանքներիդ:

— Ցերբ վոր կմեռնեմ:

— Լավ, հորդ ողորմի, վերջ տուր ալդ տե-  
սակ խոսակցության:

— Բայց և այնպես, ինչ կասես:

— Հետո, հետո, դեռ ընթրիք ուտենք: Արփ-  
ոոց գցեք, ով կա այդտեղ. ձայն ավեց դեպի  
մյուս սենյակը:

— Եղ «հետո»-ն մի ամբողջ տարի լեռ լսում  
եմ քեզանից:

— Ինչ անեմ հոգիս, քավորս, սիրտ չեմ  
անում, վոր ջուրն ընկնեմ:

Ահա ալսպես ելին խոսում Սուրամում յեր-  
կու հասակավոր մարդ ծննդլան գիշերը՝ նստած  
վրացական դարբազի ոջախի առաջ: Սրանցից  
առաջինը, լեթե ճանաչելիք, մեր ծանոթ Ոսման-  
աղան եր, վորը Դուրմիշխանին հանդիպելուց  
հետո վարձեց նրան, վորպես նոքար և բանեց-  
նում եր առևտրական գործում. յերկրորդն եր  
Սուրամի գլուղացի, անունը, համա անունն ինչ  
կանեք:

Նստեցին ընթրիքի. առաջ նստեց մեր անա-  
նունը, հետո նրա կինը, ապա նրա աղջիկը և  
ամենից վերջը Ոսման աղան:

— Սանուհիս, չպի՞տի պսակվես:

— Լավ, քավոր, բաց թող ինձ, — և ամոթխա-  
ծությամբ վար նայեց:

— Ստին ինչ ասեմ, վոր սրտումդ գոհ ել ես,  
յերբ ասում եմ:

— Բավական ե, թե չե կհեռանամ, այ, — ա-  
սաց աղջիկը, ձեռքը ծնկանը խփելով:

— Ո՞հ, ինչ փեսացու յեմ ճարել, վոր գի-  
տենաս:

— Նրա աչքն ել տրաքվի, յես մարդ չեմ  
ուղում:

- Ի՞նչու, աղջի:
  - Զե, չեմ ուզում:
  - Համենայն դեպս, կույս խոմ չպիտի
- դառնաս:**
- Վճչ:
  - Ուրեմն ի՞նչու չես ուզում մարդու գնալ:
  - Զեմ ուզում, յես մորս մոտ եմ ուզում
- մնալ:**
- Ուրեմն տանը պիտի պառավես:
  - Հա:
  - Վոչ, զավակս, այդպես մի խռովի.—Ժըպտալով ասաց Ոսման-աղան:
  - Դու մի ասի, յես ել վոչինչ չեմ ասի:
  - Հա, գիտեմ, հայրդ վոր ուզենա քեզ մարդու տալ, դու մարդու չես գնա, բայց վոր յես փեսացու ճարեմ, նրան կուզես, չե՞:
  - Վոչ:
  - Ե՞ն, ինչ յեղավ, միշտ վոչ ու վոչ:
  - Դուրմիշխան, յեկ այստեղ, — կանչեց մլուս սենյակից: Դուրմիշխանը ներս յեկավ:
  - Ցատկիր, համբուրիր իմ սանուհուս և ձեռքիդ մատանին տուր նրան վորպես նշան.
  - Փափսաց Ոսման-աղան Դուրմիշխանի ականջին:
  - Դուրմիշխանը թռավ, համբուրեց աղջկան և տվեց մատանին: Աղջիկը բղավեց, վեր թռավ սփոռցից ու դուրս փախավ:

— Ուշ, քոռանամ լես, եղ ի՞նչ արիք. — ասաց մայրը և ժպտալով մատները դրեց շրթունքներին: Հայրը բարկացած նայեց Ռոման աղալին և նրա աչքերին լերկու կաթիլ արտասուք նըշմարեց: Խեղճը հիշեց, վոր այս տեսակ բախտավորությունը նրան ել եր սպասում իր Նատոյի հետ:

— Ի՞նչ ես անում, այ մարդ, լաց ես լինում, այս ի՞նչ արիր, ի՞նչի ամաչեցրիր, խիղճդքեզ յերեկ տանջում ե:

— Վոչ, սանահեր, սա ուրիշ արցունք ե, կանչիր սանուհուս դուրս գա, շնորհավորում եմ, փեսա, արի նստիր, Դուրմիշխան, այս բոպելիս դուրս կդա և քո նշանածը:

— Ել ի՞նչ հանաք, ապա թե մարդ ես, հիմի ել մի տա աղջկանդ, աստված վկա, դուրս կդնամ, ամբողջ գլուղում խայտառակ կանեմ:

— Ճիշտ վոր, այ կնիկ, ել դուր ե, գնաբեր քո հարսնացվին:

— Ալդպես հանկարծ ի՞նչպես կարելի յե, չե վոր խնդրեցի մի քիչ սպասել:

— Բարի գործը չի սպասում. — պատասխանեց Ռոման-աղան:

Մի քիչ հետո ներս բերին աղջկան և նըշտեցրին Դուրմիշխանի կողքին:

— Եհ, այսպես շուտով չելի ուզում, բայց

քանի վոր պատահել ե, ել ինչ կարող եմ անել:  
Աստված որհնի ձեզ, վորդիք, իս ել արժա՛ ի  
լինեմ ձեր բախտավորությամբ ուրախանալու,  
— ասաց նրանց աղջկա հայրը:

— Վեր կացեք, ձեռը համբուրեցեք.— խրա-  
տեց Ռաման-աղան:

Նոր նշանվածները վեր կացան և համբու-  
րեցին ինչպես աղջկա հոր, նույնպես և Ռաման-  
աղալի ձեռը:

— Աստված որհնի, վորդիքս... — խոսքը չկա-  
րողացավ վերջացնել Ռաման-աղան և աչքերիցը  
արցունքներ գորվեցին.

Հետեւալ որը Սուրամի շրջակալքում վոչ մի  
գյուղ չմնաց, ուր մեծ ու փոքր խոսելիս չլինելին  
այդ գեղաքի մասին: Մի քիչ ժամանակ անցնե-  
լուց հետո գյուղացիք կրկին հավաքվեցան Դուր-  
միշխանի հարսանիքին: Յեվ ահա Դուրմիշխանը  
կանգնած ե աստծու տաճարի առջև և խոսք ե  
տալիս իր ամուսնուն ցմահ սիրելու.. բայց սի-  
րում եր նա արդիոք իր նշանածին: Վաշ, նա չեր  
սիրում վոչ այժմյան նշանածին, վոչ Դուրմիշխար-  
դուն և վոչ ել Ռաման-աղալին, վորն արժանի  
լիր նրա սիրույն իր արած բարիքի համար Դուր-  
միշխանին: Նա սիրում եր միայն հարստությու-  
նը և պատիվը, վորոնց և նվիրեց իր սրտի բո-  
լոր զգացմունքները: Ինչին եր պետք նրան սե-

ըր, միայն թե իրազործվեր նրա ցանկությունը, այն ե՛ դառնալ հարուստ, պատվավոր և անկախ: Ի՞նչ գնով եր առնում այս բարիքը, նա իր գըլխին այդ մասին հարց չեր տալիս: Յեվ ահա մարդս հարստության համար ծախում ե իրեն ինչպես մի կուրտիզանուհի\*: Դժբախտ Ոսմանաղա: Նա տվեց իր կարողության կեսը Դուրմիշխանին այն մտքով, վոր նա մի. մի անգամ մոմ կվառեր աստծուն նրա մեղքերի թողության համար կամ գերեզմանի վրա ջերմ արցունք գոնեկթափեր: Խեղճ Ոսմանաղա, վորչափ սխալ դուրս յեկան հաշիվներդ:

Ոսմանաղան, Դուրմիշխանին յերկու ամիս սպասելուց հետո, տարավ նրան Ստամբոլ իր կարողության կեսը հանձնելու: Յերբ յեկան Ստամբոլ, Ոսմանաղան իրոք իր կարողության կեսը տվեց Դուրմիշխանին, իսկ մլուս կեսը կտակեց յեկեղեցուն. իսկ ինքը պատրիարքի որհնությունն ստանալուց հետո հրապարակապես հարեց Քրիստոսին: Ակնհայտ ե, թե ինչօան նա պիտի տանջվեր մահմեղականներից: Վորպեսզի մի կերպ նրան կրկին մահմեղական դարձնելին, ոսմանցի մոլլաները դիմեցին ամեն տեսակ նենգավոր մի-

\* Կուրտիզանուհի—թեթև բարքի տեր կին:

ջոցների. բայց վորովհետև քաղցրությամբ չկարողացան նրա դարձը հաջողեցնել, գիմեցին ըռնիուժի և սկսեցին չարչարել զանազան տանջանքներով, բայց դրանով ել նպատակին չհասնելով, շաղա-շաղա արեցին նրան, այսինքն միջից կես արեցին։ Յերբ նրան չարչարում ելին կամ սոսկալի կերպով սպանում, Դուրմիշխանը նրան ողնելու վոչ մի միջոցի մասին չմտածեց. Նույնիսկ մահվան գեպքում զլացավ թաղման իրավունքը ձեռք բերել Ստամբոլի իշխանությունից, Վողորմելի Ռսման-աղալի դիակն ընկած եր մի առժամանակ Ստամբոլի փողոցներում, մինչեւ վոր նրա հոտից նեղված՝ մտածեցին ծովը նետել։ Դուրմիշխանը վորտեղից ուներ ժամանակ աղջկա նման լալու կամ Ռսման-աղալի հոգեհանգստյան համար գես ու գեն ընկնելու, Ճիշտ այն ժամանակ, յերբ Ռսման-աղալին ծովս ելին ձգում, նա կանգնած եր Բոսֆորի ափին և սպասում եր Ղրիմից նավին, կալմուխի գդակացու մորթիներով՝ Ռսման-աղալից պատվիրված։ Կանգնած եր ու մտածում եր, թե վորտեղ ավելի ձեռնուու յէ ծախել, տեղում, թե Վրաստանում։

— Դեռ այստեղ առևտուր կանեմ, — ասաց միքանի ըոպելից հետո, — ապա՝ կդնամ Վրաստան։

Այս վճռից հետո Դուրմիշխանն իսկապես մնաց. Ստամբոլում ութ ամիս և այնպես դրավ-

վեց առևտրով, վոր վոչ մի անդամ չհիշեց կնոջը  
և չհայտնեց, թե ինչպես ե ինքը։ Ութ ամսից  
հետո Դուրմիշխանը զանազան մետաքսեղենով  
բարձած քարվանի հետ Ստամբոլից դարձավ տուն։  
Կինը հանդիպեց նրան իր սիրունիկ զավակով։  
Խեղճ աղջիկը կարծում եր, թե դրանով կուրա-  
խացնի Դուրմիշխանին, կփաթաթվեր ու քաղց-  
րութիւնամբ կհամբուրեր տղի մորը, բայց նա նա-  
յեց լերեխին, ժպտաց ու հարցրեց։

— Դեռ հո չեք կնքել։

— Վոչ, բայց մերոնց Գոգիան խնդրում ե,  
վոր կսքի, — պատասխանեց կինը։

— Գոգիա չե — Մոգիա չես ուզում, ասա,  
վոր իշխանին պիտի կնքել տամ։

— Ինչ իշխան, Գոգիան ավելի լավ բարե-  
կամություն չի անի։

— Դու ի՞նչ գիտես, թե ինչ ե իշխանը, դու  
քո բանը տես, գործերիս մեջ մի խառնվի։

— Այնուամենախիվ կասեմ, վոր իշխանը  
մեզ բարեկամություն չի անի։

— Դու ի՞նչ գիտես, մի անդամ մեծ իշխա-  
նը վոր կանչի քեզ սանամեր. կամ նրա կինը քեզ  
վոր ջոկի մնացած կանանցից ու բարեկի, ասա  
խնդրեմ, ինչ արժե ալդ։ Հետո, վորդիդ կմեծա-  
նա, գիտես, թե իշխանն ինչպես կհովանավորի  
նրան։ Դու ի՞նչ գիտես, աչ կին, — և մտածմունքի

մեջ ընկած յերեսակացում եր, թե ինչպես պիտի  
մեծացներ վորդուն։ Ահա տեսնում ենա իր վոր-  
դուն ձի նստած գնում ե կնքահոր մոտ։ Մեծ  
հրապարակի վրա ընկած ե մի մեծ քար, վորի  
վրա դրած ե արծաթե թաս։ Ահա արշավում ե  
իշխաններից մինը, հրացանը ձեռքն առավ, ար-  
ձակեց, բայց վրիպեց, թասին չդիպավ, գալիս ե  
յերկրորդը, նա յել վրիպեց, ահա սրարշավ գա-  
լիս ե նրա վորդու կնքահայրը, կրակեց, բայց նա  
յել չդիպցրեց։

Վերջը սլանում ե ձիու վրա նրա վորդին,  
վորը գեղեցիկ կերպով ձեռքն առնելով հրացա-  
նը, խփեց և թասը վայր գցեց։ Հարց ու փորձ  
ե ընկնում, թե ով ե այս յերիտասարդը, ինքը՝  
թագավորն ել ե հարցնում, թե ովքեր են նրա  
ծնողները և կերեա, վոր Դուրմիշխան Ծամալա-  
ձելի վորդին ե, ոհ, ինչքան յերջանիկ կլինի այն  
ժամանակ Դուրմիշխանը։ Ահա նրա յերիտասարդ  
վորդին դառնում ե վանական, տեսեք՝ վորպիսի  
հրեշտակի նման գեմք ունի կամ լսեք, թե ինչ  
քաղցր ձայնով աղոթք ե ասում, նայեք՝ ինչպես  
նրա կարդալուց զմայլված՝ աղոթողները հոգե-  
պես ձուլվեցան, միայն մի-մի տեղ լսվում ե վա-  
նականների հեծկլտոցը։ Ահա մի անգամ նրա  
կնքահայրը հանդիպում ե կաթուղիկոսին և գո-  
վում ե իր սանիկի ընթերցումն։ Կաթուղիկոսն

ինկատի յե առնում, տանում ե իր մոտ, գեռ  
ձեռնադրում ե վանահալը, ապա՝ վարդապետ և  
լեպիսկոպոս։ Այժմ Դուքմիշխանի լեպիսկոպոս  
վորդին ձի նստած զնում ե դրոշակի առջեկց և  
տանում ե լեկեղեցապատկան ճորտերի զորքը  
իշխանին ոգնության։ Հետաքրքրվում են, ով ե  
այս լերիտասարդ լեպիսկոպոսը։ Սա սովորագյար  
Դուքմիշխանի վորդին ե։ Ո՞հ, վորքան լերջանիկ  
պիտի զդա իրեն այդ միջոցին Դուքմիշխանը։ Ո՞վ  
ե իմանում, շատ կարելի յե կաթուղիկոս ել դառ-  
նա, հա, այն ժամանակ Դուքմիշխանը վոչ մի  
իշխանի իսկի գլուխ չի տա։

Մյուս որը Սուրամում թոնիր չմնաց, ուր  
թխվելիս չլիներ հաց և նազուք Դուքմիշխանի  
վորդու կնունքի համար։ Յեզ իրավ, զարմանալի  
կնունք արակ իր կյանքում վորտեղ ինչ տե-  
սել եր, թե մեր Վրաստանում, թե թուրքերի մեջ,  
ամեն ինչ պատրաստել տվեց և համարչա մի որ-  
վա հեռավորության վրա վոչ մի գլուղ չմնաց,  
վոր մեծ ու փոքրին հրավիրած չլիներ։ Յերե-  
խին կնքեց իշխան Քայխոսրո Աբաշիձեն, վորն  
այդ միջոցին գտնվում եր այդ կողմում։ Նա սանի-  
կին պարզեց իր ճորտերից մի ընտանիք։ Սրա  
վոխարեն Դուքմիշխանը կնքահորն ընծայեց վոր-  
ովեսքավորափակա՛ մի գեղեցիկ արաբական նժույգ,  
բարձած զանազան թանգարին կերպասներով։

Ահա, այդ ժամանակն եր գրված այն նա-  
մակը, զվորը կարդաց թշվառ Դուլիսվարդին:

Ճիշտ, Դուլիսվարդին, նրան մոռացանք. այս  
ըսպեցիս կսկսեմ նրա պատմությունը:

Թող Զուրաբը դեռ մեծանա, այս անունը  
դրին Դուրմիշխանի վորդուն, թող մեծանա, ուենք  
ելի կպատահենք նրան, յերբ նա արդեն դարձած  
կլինի մի գեղեցիկ յերիտասարդ, հոր պարծանքը,  
մոր հուկը և շատ գեղեցկուհիների տենչանքը:

## V

Հավլաբարում\* սուրբ. Կարապետ յեկեղեցու  
արեւելյան կողմում հենց ըլրի գլխին, յերբ պատա-  
հում ելին այն դեպքերը, վորոնց մասին հիմա  
պիտի պատմեմ, ասաց հերթապահը, կար մի  
սենյակից բաղկացած լաքաթիղի տուն, վորն ու-  
ներ արեւմտյան կողմից յերկու լուսամուտ. սրանց  
միջից վոչինչ չեր յերեսում, վորովինետե պատած  
ելին ձիթած թղթերով։ Այս տունը մի քիչ կար-  
դի վոր բերվեր, դրսից թղթերի փոխարեն ա-  
պակիներ գցվեր, սվաղվեր՝ հաճելի տեսք կու-  
նենար, բայց ներկա դրությամբ տիսուր տոպա-  
վորություն եր թողնում։ Հունվարի առավոտ եր.  
փչում եր քամին և սվավալով լուսամուտներին  
լցնում ձյան թեփեր։ Այդ տան բնակիչները՝ յեր-

\* Հավլաբար — Թիֆլիսի հայաբնակ թաղերից մինն է։  
Ծ. թ.

կու ալրի կին նոր ելին վերկացել, նրանցից մի-  
նը տուն եր ավլում, իսկ մուսը, վոր քաթիբա  
ուներ հաղած, վոտները դրել եր քուրսու տակ  
ու տաքանում եր: Առաջինը մի պառավ կին եր,  
մոտ 70 տարեկան, տարիքից կոացած մեջքով.  
բայց դեմքից յերեւում եր, վոր իր ժամանակ գե-  
ղեցիկ եր յեղել: Մյուսը կիներ մոտ 35 տարե-  
կան, քիչ մեծ քթով, չոր դեռքով և այնպիսի  
բարակ շրթունքներով, կարծես թե մեկին ծաղ-  
րելիս լիներ: Աչքերը սև ելին, բայց այնպես  
կնայեր վրավ, վոր կասելիք՝ թե այս կինն իմ  
հոգին ել ե տեսնում: Նկատվում եր, սա չեր պատ-  
կանում այն կանանց, վորոնք իրենց կյանքում  
վորեւ խնդիր լուծելու ջանք չեն գործ դրել:

— Վոչ, մայրիկ ջան, ել չեմ կարող, ինչ  
ուզում ես արա, ուրիշ գործով կզբաղվեմ.—ասաց  
կրտսեր կինը պառավին:

— Ի՞նչու, վորդի, ի՞նչ ե յեղել:

— Են ե յեղել, վոր շատ անդամ այնքան  
նեղվում եմ, վոր չգիտեմ ինչ անեմ:

— Ի՞նչից ես նեղվում, վորդի:

— Այ ինչից, մարդ ե գալիս, իսկապես  
կարիք ունի, լալիս ե, աղաչում ե, յերդվեցնում  
ե, վոր ճիշտն ասես, իսկ դու սկսում ես, սա-  
տանան դիտե, թե ինչ...

— Ի՞նչ անեմ, վորդի, մեր նախորդներն

արդպես են յեղել, մենք ել այդպես պիտի վար-  
վենք:

— Ահա, են խեղճ աղջկանը խոսք տվի և ա-  
սի, վոր վաղը կդաս, վաղը կասեմ՝ թե ինչպես  
վարվես. գիշերս յերազում կտեսնեմ, ասի. բայց  
յես գիշերս յերազ իսկի չեմ ել տեսել. իսկ նա  
այժմ կդա, ի՞նչ պիտի ասեմ:

— Ի՞նչ աղջիկ, յես չեմ հիշում:

— Ա՛յ, մի սիրուն աղջիկ չեկավ, վոր լա-  
լիս եր:

— Հա, յես այն միջոցին դուրս գնացի հե-  
տո ի՞նչ եր:

— Դառն հեկեկանքով պատմում եր, վոր  
նշանածը խաբել ե իրեն, գեռ նրան ե սիրել,  
ապա ուրիշի հետ պսակվել:

— Ի՞նչ անենք, այդ տեսակ որինակներ  
քիչ ե պատահման:

— Նա կարծում ե, վոր ինքն ե առաջին  
որինակը. — տխուր կերպով առաց կրտսերը:

— Հետո, ի՞նչ եր ուզում:

— Ասում եր՝ այնպիսի ճար պիտի սովո-  
րեցնես, վոր յես ել այնպես սպանեմ նրա սիր-  
ուր, ինչպես սպանեց նա իմը:

— Քո արե, գիտեմ, բան չելիր ասի, այլ  
գժի նման կսկսելիր լալ նրա մոտ:

— Վոչ, թեև լացս գալիս եր, բայց և այն-

պես դարի զցեցի և ասացի, վոր ուխտ գնաը  
Գորիս-Զվարի \* ու Արբուլի \*\* սուրբ Գևորգը, ասի  
նրանք կպատժեն իրեն դավաճանողին:

— Ավելի հեռու պիտի ուղարկելիր, որինակ,  
Սպարսանդելողը, Լոմիսը կամ Լաշրի-խաչը, այն-  
պես վոր կատարելը դժվարանար:

— Ի՞նչ եք հրամալում, այնտեղ ել չի գնում.  
ասում ե՝ իմ և աստծու մեջ ընդհանուր ել վոչինչ  
չկա, ինձ այնպիսի բան սովորեցրու, վոր սա-  
տանի զորությամբ կատարվի:

— Հետո, զու ի՞նչ ասիր:

— Ի՞նչ պիտի ասելի, ասի, վոր այսոր գա,  
այ, վորտեղ վոր ե կգա, չգիտեմ ի՞նչ ասեմ:

— Բաս, վոր գա, ասա՝ թե մալրս գարի  
կցցի:

Հենց այն ժամանակ, յերբ սրանք այսպես  
ելին խոսում, Գուլիսվարդին աղջիկ-պարոնից  
իրավունք վերցրեց և յեկավ սրանց մոտ: Այս  
դեպքը տեղի ունեցավ Դուրմիշանի պսակվելու-  
լուրն ստանալու յերկրորդ որբ: Գուլիսվարդին  
սառած ձեռքերով թակեց գուռը:

\* Գորիս-Զվարի—Գորի քաղաքի մոտ ե, հոչակա-  
վոր ուխտատեղի յեր. 1919 թ. յերկրաշարժի ժամա-  
նակ քարուքանդ յեղավ:

\*\* Արբոն—գտնվում ե նույնպես Գորվա գավառում:  
Ծ. թ.

— Ո՞վ ես, ներս արի:

— Ներողություն, նեղություն տվի ձեզ.

անժամանակ եմ գալիս — ասաց Գուլիսվարդին  
ներս գալուն պես:

— Վոչինչ, վորդի, բան չկա, արի տաքա-  
ցիր քուրսու մոտ. — ասաց պառավը:

Գուլիսվարդին մոտեցավ, հանեց քոշերը,  
բարձրացավ թախտը, վերմակը քաշեց և նստեց  
քուրսու մոտ:

— Ա՛յ, մայրիկ, գիշերս վոր ասի, սա այն  
աղջիկն ե. — ասաց աղջիկն իր մորը, Գուլիսվար-  
դու տաքանալուց մի փոքր հետո:

Պառավը զննեց Գուլիսվարդուն:

— Են անաստվածը քեզանից սիրուն ել  
ում պիտի ուզեր. աննման Արեգնազին հո չպետք  
ե դտներ:

Գուլիսվարդին ամոթխածությամբ գլուխը  
կախեց և աչքերը լցվեց արտասունքով:

— Մի լար, վորդի, — ասաց նույն կինը, — մի  
լար, դու չես առաջին որինակը:

— Այս, դու չես դրա առաջին որինակը,  
— ավելացրեց տխուր ձայնով կրտսեր կինն եր:

— Այժմ ինչ ես ուզում, վորդի. — ասաց  
պառավը:

— Աղջկադ հարցրու, ինչ վոր ուզում եմ

— Սովորեցրու մի այնպիսի ճար, վոր վրե-  
ժը լուծի:

— Վրիժառությունը հանցանք ե, վորդի, աստծու վրա զցիր, աստված կանչիր, վոր նա փոխարենը հատուցանի:

— Վոչ, մայրիկ, յես ինքս պիտի վրեժս լուծեմ և այնպես պիտի վրիժառու լինեմ, վոր նա դիտենա, թե յես եյի և վոչ թե մի ուրիշը:

— Հապա ինչ անենք, վորդի. ալ ինչ կասեմ, մի առժամանակ չի կարելի վրեժը լուծել, պիտի բավական սպասես:

— Վորքան կամենում եք, թեկուղ մինչև մահս, միայն թե վերջիվերջո նրա սիրտը դաղեմ:

— Ուրեմն գիտես ինչ կասեմ:

— Հրամայեցեք:

— Սովորիր գրքացությունը, յերբ գըրացության ամեն տեսակ դադանիքները կսովորես, այն ժամանակ ինքդ կվորոշես, թե ինչպես պատժես թշնամուդ։ Ուզում ես:

— Ուզում եմ,—ասաց մի փոքր հետո Գուլիսվարդին։

— Վոչ, վորդի, ալդպես շուտ խոսք մի տա, դեռ լավ մտածիր։

— Մտածել արկավոր չե, յես պիտի պատժեմ սիրտս խոցողին, ել ուրիշ բան չեմ ուզում։

— Գիտես, վորդի, ինչ տեսակ բան ես սկսում, վոչ, չգիտես, ալ ինչ կասեմ. այսորվանից դու բաժանվում ես աշխարհիցս։ Մըանից

հետո դու դառնալու յես կախարդ գրբոց, սրանից հետո ամենքը կնայեն քեզ վոչ վորպես մարդու վրա, այլ ինչպես մարդու և սատանայի կապի վրա։ Մտածել ես այս մասին։

— Ել չեմ ուղում մտածել։

— Վոչ, այս գիշեր կրկին մտածիր, թե կարող ես, աստծուն ել խնդրիր և վազն ինձ ասա, ինչ վոր կվճռես. առայժմ ցտեսություն։

Այս խոսակցությունից հետո Գուլիսվարդին դուրս յեկավ ու տուն գնաց։

— Այդ եր պակաս, — ասաց աղջիկն իր մորը հանդիմանելով, Վարդովի դուրս գնալուց հետո, — ապա մւր ես գլխիդ փաթաթում ուրիշի վորդուն, յերբ գլուխդ ել հաղիվ ես կարողանում պահել։

— Ինչ անեմ, վորդի, յես կարծում եմի, թե մեր արհեստը կվախեցներ նրան և իր մտադրությունից հետ կկենար, բայց խեղճը հանաք չի անում։

— Հիմա ինչ կանես, հո տեսար, վոր ինձ նման չի։

— Քեզ ինչ. նա յել լավ բան չի անում, մարմնով կորած ե, հոգին ել պիտի կորցնի։

— Բայց և այնպես կեցցե այդ աղջիկը, թեև կորչում ե, բայց ուղում ե թշնամուն ել վեասել։

— Իրը թե ի՞նչով պիտի վսասի, շատ ել  
մեր արհեստը սովորի:

— Ուրեմն վոչինչ չես սովորեցնի:

— Վոչ, յես հույս ունեմ, վոր նա այս մի  
տարրում իր մտադրությունը մոռանա և դառնա  
կըկին մի պատվավոր կին: Սրանով կաղատենք  
մենք քրիստոնյալի հոգին դժոխքից, վորով աստ-  
ված ել կարելի յե մեզ խղճա:

— Վոր չհամաձայնվի և սովորել ուզենա:

— Կսովորեցնեմ, ինչ վոր գիտեմ, ամեն  
բան կսովորեցնեմ, հետո ինքը զիտե, թե ինչ-  
պես կոդտվի իմ սովորեցրածից: Բացի դրանից,  
այ ինչ պիտի ասեմ, վորդի, այդ աղջիկը մեզ  
պետք կգա. հո զիտես, վոր իշխանների աղա-  
խիններիցն ե, մեզ կարիք ունեցողներին կու-  
ղարկի մեզ մոտ, դրանով մի կտոր հաց կճարենք:

Մինչդեռ որանք այս խոսակցության մեջ  
ելին, Գուլիսվարդին գնաց տուն, ներս մտավ  
աղջիկ-պարոնի մոտ և խնդրեց, վոր իրեն աղատի:

— Ի՞նչու, աղջի, մի՞թե ձանձրացար ինձա-  
նից, — հաբցը աղջիկ-պարոնը:

— Վոչ, աղջիկ-պարոն, աստված վկա, վոչ. —  
պատասխանեց Վարդոն շփոթված:

— Ուրեմն ինչու յես թողնում ինձ, Վարդո-  
ջան, վոչ-վոք հո չմ նեղացնում, ասա, վորդի:

— Վոչ, բայց...

— Ել ինչ վոչ, ասա շուտ, ինչիդ ե պետք  
ազատվելը:

— Կարելի լե ավելի լավ մարդ ուղի ինձ,—  
պիտի ասեր Գուլիսվարդին, բայց լացից ել չկա-  
րողացավ արտահայտել:

— Ի՞նչ, ի՞նչ, աղջի:

— Կարելի լե ավելի լավ մարդ ուղի ինձ.  
— Կրկնեց Վարդոն:

— Նա, յեթե այդպես ե, վաղն ևեթ ազատ  
կլինես, դրա համար ել ինչ ես լալիս, անմիտ,  
գիշերս պարոնը կգա, կասեմ, վաղն ևեթ գիր  
գրել կտամ. վճրտեղ պիտի ապրես:

— Մորաքըրոջս մոտ:

Թշվառ Գուլիսվարդին այսպիսով սկսեց սուտ  
խոսել. մինչ որս յերբեք սուտ չեր խոսել:

Յերկրորդ որն ազատություն ձեռք բերած  
Գուլիսվարդին մոտեցավ Հավլաբարում մեր ծա-  
նոթ դուանը և սկսեց թակել: Ներսից ձախը հրա-  
վիրեց նրան:

Մի ներս գնա, թշվառ Գուլիսվարդի, յերե-  
սիդ խաչ արա, աստծու անունը տուր, թքիր սա-  
տանալին և հետ դարձիր:

Զլսեց, ներս գնաց դժբախտ Գուլիսվարդին:

— Ի՞նչ ե, վորդի, մտածեցիր, — հարցը եց  
պառավ կինը, յերբ ներս մտավ Գուլիսվարդին:

— Մտածեցի և վճռեցի, վոր սովորեմ, — պատասխանեց Գուլիսվարդին:

— Կեցցես աղջի, ինձ չես նմանվում. — ասաց կրտսեր կինը:

— Սա յել լավ չի անում, յերկուսդ ել ջեհել եք դեռ, խղճուկներ, արյուններդ յեռ ե գալիս, — պատասխանեց պառավը:

— Լավ, վորդի, դիմեց Գուլիսվարդուն, յերբ վճռիցդ հետ չես կենում, յեկ մեզ մոտ ապրելու: Աստված անի, վոր չփոշմանես մտադրությանդ համար:

— Վաղն ևեթ կրերեմ իրեղեններս, — պատասխանեց Գուլիսվարդին:

Ամբողջ տարի ծառայեց Գուլիսվարդին այս գրբացներին, բայց վերջիններս գրբացությունից բան չսովորեցրին նրան.

— Զեհել ե, գլխի քամիները կանցնեն և ապա նույնիսկ շնորհակալ ել կինի, վոր մեր մեղքերին մասնակից չարի, — ասում եր պառավը, բայց մի տարի անցնելուց հետո յել չեր նկատվում Գուլիսվարդու մտադրության մեջ մի վորեւ փոփոխություն:

Մի տարուց հետո մեռավ պառավ գըրբացը. կրտսերը համոզվեց, վոր անկարելի յեր սրանից հետո Գուլիսվարդուն արձակել. ուստի ինչ վոր գրբացության վերաբերյալ գաղտնիքներ

գիտեր, բոլորն ել սովորեցրեց։ Գրբացության առթիվ յեկողներին նա բոլորին ել Գույխսվարդուվը յեր մատնանիշ անում։

**Զանցավ յերկար ժամանակ, հասարակ ժողովրդի մեջ սկսեցին խոսել Վարդովի զրբացության մասին, և անհամար ժողովուրդ սկսեց այցելել նրան։**

Տասը տարուց հետո Վարդովի միայն ստվերն եր մնացել. կնճոռտված նիհար յերեսով նստած եր յերկնարկանի թանգարդին կերպով զարդարված տան մեջ և զրբացություն եր անում։ Միքանի իշխաններ՝ յեկած թե Քարթլից և թե Կախեթից Վարդովի մոտ զրբացության, հարևան սենյակում նստած՝ սպասում ելին հերթի։

— Ո՞վ ե քո սիրահարը։

**Աղջիկն ասաց՝ ով վոր եր։**

— Մի լար, աստված վողորմած ե, մի կերպ կողնենք, նորից կսիրի քեզ քո սիրահարը. բայց հարսանիքիդ պիտի հրավիրես ինձ; հա։

— Ո՞հ, անպատճառ, անպատճառ, աստված ե վկա, միայն թե կատարվի։

**Գույխսվարդին կատարեց նրա խնդիրը առանց թիլիսմի։**

— Ապա իմացիր, Վարդո ջան, ի՞նչպես ե իմ Ալեքսանդրը, մի ամիս ե նամակ չեմ ստացել. — ասաց նրան իր նախկին աղջիկ-պարոնը,

վորը լեռը խմացավ նրա դրբաց դառնալու մասին, վոչ թե սառավ կամ դադարեց սիրել այս սկսեց լերկլուղ կրել նրանից այնչափ, վորչափ և իր ամուսնուց:

Վարդոն դարի դցեց:

— Աղջիկ-պարոն, այժմ ձինստած Ջիրիթ եխագումքո Ալեքսանդրը, ահա, թագավորն ել այնտեղ եւ և զիտում ե ջենելների Ջիրիթը. Այս Ալեքսանդրը ձին քշեց, Բարաթանց Թեյմուրազը լետեկցն ընկավ և Ջիրիթը խփեց. կեցցես, պարոն, Ջիրիթը բոնեց և ձին լետ դարձրեց, քշիր ձիդ, Թեյմուրազ, քշիր, լեկավ, հասավ, սլարոն, ոհ, հենց ուղղակի խեղճի մեջքին դիպավ. Այս, թագավորը գովում ե Ալեքսանդրին. տեսնում ես, աղջիկ-պարոն, թագավորը գովում ե Ալեքսանդրին, ել ինչ ես ուզում:

— Վոչինչ, վորդի, շնորհակալ եմ, — զարմացած ասաց Վարդուին:

Յես ձեղ ել չեմ ձանձրացնի Գուլիսվարդու գրբացությամբ, միայն կասեմ այն, վոր Վարդոն այս միջոցին տեղեկացավ այնպիսի բաներին, վորը ամոթալի լեր մարդկացին ցեղի համար:

Անցավ կրկին տասը տարի հանաք բան չի տասը տարին. այս տասը տարվա ընթացքումվախճանվեցան նրանցից շատերը, վորոնց հետ մենք դեպք ունեցանք ծանոթանալու այս պատմու-

թիան մեջ։ Մնացին միայն գլխավոր անձինք՝  
Դուրմիշանն իր ընտանիքով՝ վորդու հետ միասին  
և Վարդոն իր անվանի զբացությամբ։ մնացին  
վորպես յերկու փահեվան հրապարակի վրա,  
պատրաստ մենամարտելու։

Տեսնենք, ով—ում կհաղթի։

## VI

Ապրիլի յերեկոներից մինն եր, արևը նոր  
եր մայր մտել Սուրամի բլրի յետև և այնտե-  
ղից առատորեն ճառագայթներ եր նետում, վո-  
րոնք խառնվելով մթնոլորտին՝ դարձնում ելին  
նրան բոստրագույն։ Բնությունը տարված արևի  
հրաժեշտով, վոչ մի զեփյուռով չեր շարժում  
տերեները։ Տեղ-տեղ լսվում եր միայն միշտ  
անհանգիստ թոշունների ճռվողյունը, սրանք գի-  
շերելու համար փնտում ելին նստելու հարմար  
տեղ, վորի պատճառով և խլում ելին իրարից  
տեղերը։ Նախրապանները նոր ելին դուրս քշել  
նախիրն անտառից մտրակի ճաք-ճքոցով և յեր-  
գելով դեպի տուն ելին քշում։ Նախիրը գնում եր  
դեպի տուն արագ-արագ և լուռ։ միայն կովերն  
ելին տեղ-տեղ բառաշում՝ յերբեմն իրենց հոր-  
թերի չափաղանց սիրուց դրդված։ Միքանի կին  
կուժերն ուսին շարեշար շտապում ելին լուռ  
դեպի ջուր՝ մտածելու։

Այդ միջոցին Դուրմիշխանի տան կողքին, թավշի նման կանաչ դաշտի վրա փռած եր մի թանգագին գորգ, վորի վրա պառկած եր Դուրմիշխանը։ Արևից մի քիչ սևացած ու չոր գեմքը, այլ և ջլուտ ձեռներն ու սաստիկ նիհար մարմինը ցուց ելին տալիս, վոր նա տանը նստել չեր սիրում։ Միայն դեմքի վրա միքանի ակոս և ալեխառն մազերն ու բեխերը վկալում ելին, վոր նա յերբեք անգործ չեր մնացել։ Այդ բոլորը դրոշմել եր նրա վրա իր կնիքը. բայց մենք այդպես Դուրմիշխանին տեսնում ենք համարյա թե քսան տարուց հետո։

Դուրմիշխանը վերջացրեց թե չե Ստամբոլի լավ տեսակի թութուն քաշելը, չիբուխը դեն դցեց, շուռ յեկավ մեջքի վրա և սկսեց նայել փիրուղի նման ջինջ, կապույտ յերկնքին։ Նա նայեց, նայեց յերկնքին ու մտածմունքի մեջ ընկափ։ Նա հիշեց իր մանկությունը, յերբ ման եր գալիս ցնցոտիներով և ամեն մի սպասավոր նրա զլխին բամփում եր, հիշեց իր առաջին ծանոթությունը Գուլիսվարդու հետ, նրա սերը։

— Խեղճը, ինչպես սաստիկ սիրում եր ինձ, մտածում եր Դուրմիշխանը, նա վոր չլիներ, պարոնն ինձ չեր աղատի։ Ինչ լավ վարվեցի, ինձ այնպես ձեւացրի, իբր թե սիրում եմ, բայց յերդիւմ եմ ասպծով, վոր արժեր նրան սիրել։

Վորքան խարեցի խեղճին, թե կդամ. ճիշտ,  
վերջին նամակովս փող խոստացա, ի՞նչու չու-  
ղարկեցի. եհ, փողն ինչ կանե, մեզ ավելի պետք  
եւ Յերանի վորաեղ եւ խեղճը. Ո՞վ եւ իմանում,  
ինչպես պառավեց ու փչացավ. Յերանի գիտե-  
նամ, ինձ հիշում եւ ելի. չեմ կարծում, յերեխ  
ծառաներից մինին կուզեր ու վորդկերանցով  
լիքը կլինի. Վորտեղից կունենա ժամանակ, վոր  
ինձ հիշի... Խեղճ Ռսման-աղա, մի մոմ գոնե  
վառելի նրա համար. ամոթ ինձ. թշվառն իր  
կարողության կեսը նվիրեց ինձ. Այս ըովելիս  
նրա շնորհիմն ե, վոր այսպես բախտավոր եմ:  
Ի՞նչ անեմ, աստված վկա, փող չեմ խնայում,  
բայց ժամանակ չունեմ, ինչ անեմ. Ո՞հ, ինչ  
սարսափելի յեր վոզորմելին, յերը տանում ելին  
սպանելու, այնպիսի հայացք գցեց վրաս, կար-  
ծես թե բան եր խնդրում. Ի՞նչ կլիներ, վոր  
թաղելի: Յես ու իմ աստված, պարտական մնացի:

— Բարե հայրիկիս, ասաց մի յերիտա-  
սարդ, վորը յեկավ թե չե, մի քիչ հեռու՝ ձիուց  
յած թուավ:

— Ո՞հ, Զուրաբ, վորդի, դժւ յես. — բացա-  
կանչեց Դուրմիշխանը, վեր թուավ յերեխի պես  
ու համբուրեց յերեսը, — ի՞նչպես ես, վորդի,  
հո լավ ես:

— Լավ եմ, մայրս մւը եւ:

- Ալստեղ ե, դեռ չես տեսելի
- Վոչ, ուղղակի քեզ մոտ լեկա:
- Կեցցես, վորդի, միշտ առաջ հորդ պիտի ուրախացնես. ուրիշ ի՞նչ կա, ի՞նչպես մանցեկար, ինչպիսի ժամանակ անցկացրիք ընկերներիդ մեջ:
- Ել մի հարցնի, հալրիկ, ել չեմ կարող տպրել այդ սաստիկ հպարտ իշխանների մեջ:
- Ի՞նչ ե, ինչն ե խանգարում քեզ:
- Ել ի՞նչ ասեմ, ձայն հանեմ թե չե, կամ հանաք անեմ, կամ խառնվեմ վորեե բանին, իսկույն հեռանում են ինձանից. կարծես թե ցավագար լինեմ և սկսում են մըթնըթալ. «կըիան վոտը դուրս հանեց, ասելով՝ յես ել նախըի արժանի լեմ»:
- Ի՞նչու, ի՞նչով են նրանք քեզանից լավ, կարողությամբ, գեղեցկությամբ, քաղաքավարությամբ, թե՛ տղամարդությամբ:
- Վոչ մեկով:
- Ապա ի՞նչ են ուզում, ի՞նչով են լավ:
- Ծագումով:
- Հըմ, ծագումով... ծագումով, — մտածմունքի մեջ ընկած, կրկնեց Դուրմիշխանը. — ապա մի հարցըու նրանց, նրանցից ով իր տղամարդությամբ ձեռք բերեց ձորտերն ու կալվածքը. ով ձեռք բերեց այնքան վող, վոր կարողա-

նա ուղած իշխանի կալվածքն առնել: — Դուրսիշխանն իր հարստանալը վերագրում եր միմիշյն իր տղամարդության, հմտության:

— Նրանք դրա մասին չեն մտածում, — պատասխանեց Զուրաբը:

— Այդ քո պարտքն ե, դու պիտի հասկացնես նրանց: Նրանց հայրերը չեն, վոր աղաչում են ինձ իրենց վորդուն կնքել, սպասելով ինձանից լավ պարզե, իսկ յերբ փողի կարիք են ունենում, խոնարհ գլուխ են տալիս, թող սպասեն: Դու այն ասա, թագավորին մի վորես տեղ աշքի չընկար:

— Վոչ մի տեղ արդպիսի դեպք չեղավ. բայց ինչ-վոր խոսում են, իբր թե պատերազմ պիտի լինի. այ, այն ժամանակ կտեսնենք, թե ով ե կրիան, կամ ով ե առյուծը:

— Ցավդ տանեմ, զավակս, հույս ունեմ հորդ չես ամաչացնի, բայց այդ ինչ ասիր, պատերազմ. ում դեմ պիտի լինի պատերազմ:

— Զգիտեմ, կարծեմ ոսմանցոց դեմ, բայց հաստատ վոչվոք չզիտե:

— Եդ լավ լուր չբերիր, վորդի, պատերազմ առեստի թշնամին ե, վորդի: Յեթե հանկարծ պատերազմ պալթի, տուններս կըանդվի:

— Այ, հո ասում եմ, այնպես ես հանդի-

մանում, կարծես թե լես լինեմ պատերազմի պատճառը:

— Լավ, լավ, վորդի, ապրես. — ու տխրեց Դուրմիշխանը։ Այս վոր նկատեց Զուրաբը, մնաս բարև ասաց ու գնաց մոր մոտ։ Դուրմիշխանը նայեց Զուրաբի յետեից և նկատելով նրա գեղեցիկ, յերիտասարդ հասակը, հպարտությամբ ժպտաց։

— Ի՞արկե, կնախանձեն մեր իշխանները, վորն ե նրանց մեջ իմ Զուրաբի պես, — ասաց Դուրմիշխանը հպարտությամբ իր սրտում. ապա սկսեց մտածել իր առևտրի մասին, — վատ լուր բերեց իմ տղաս, յեթե վաղն եեթ ունեցածիս տիրություն չանեմ, բոլորովին կկործանվեմ։ Ապա այն ժամանակ տեսեք, թե ինչ հալը կընկնի նրա ազնվական կոչումը։

Մյուս առավոտ Դուրմիշխանը վաղ վեր կացավ, վերցրեց հետն իր ոսմանցիներից յերեք հոգու և ուղեռվեց Ստամբոլ։ Գնում ե Դուրմիշխանը կարողություն ձեռք բերելու, բայց չգիտե, թե ինչպիսի դժբախտություն ե պայթելու նրա գլխին։

Դուրմիշխանի գնալուց հետո չանցավ յերկար ժամանակ. Թագավորը կանչեց իր առաջին վեզիրին և հրամայեց քննել Վրաստանի սահմաններն ոսմանցիների կողմից և վորտեղ հար-

կավոր համարվի, բերդեր շինել: Գնաց վեղիրը,  
քննեց սահմանները և ի միջի ալոց գտավ բերդ  
շինելու կարիքը Սուրամում:

Իսկուն շտապով հավաքեցին նյութեղեն,  
կիր ալբեցին և սկսեցին կառուցել:

— Ա՛յ, հիմա, լեթե իսկապես բան պատա-  
հեց, անպատճառ պիտի աշխատեմ, վոր հոչակ-  
վեմ, — ասաց Զուրաբը և այդ մտքով տվեց մի-  
քանի սալ բանելու. բայց զարմանալի բան եր,  
քանի անգամ վոր շինուած ելին բերդի պատերը  
հինդ գաղ բարձրությամբ, այնքան ճաքվում ե-  
լին ու մեջտեղից կիսվում: Ինչ-վոր չար վոգի  
արգելք եր լինում այդ բերդի կառուցմանը:

Քահանային ել պատվիրեցին մաղթանք կա-  
տարել, դարձալ չեղավ, պատը կրկին ճեղքվեց:  
Ամեն միջոց գործ դրին, բայց վոչնչով չկարո-  
ղացան ոգնել, պատը շարունակում եր ճեղքվել:  
Ի՞նչ անել...

— Արի գրբացին հարցնենք, — բացականչեց  
մեկը:

— Գրբացին, գրբացին, — կանչեցին ամեն-  
քը, վորոնք վեղիրի մոտ ելին: Այս միտքը հայտ-  
նեցին վեղիրին. վեղիրն ել հավանություն տվեց,  
բայց չդիտելին, թե ում դիմելին, և կ եր անվա-  
նի գրբացը:

— Հավլաբարցի Վարդոն, — բացականչեցին  
միքանի հոգի միասին:

— Զարմանալի գրբաց ե, մի անգամ այն-  
պիսի բան ասաց ինձ, վորի մասին ինձանից  
ու աստծուց ավել վոչվոք բան չդիտեր, — ասաց  
մինը:

— Ինձ ել, այ մարդ, — ասաց մյուսը:

— Ինձ ել, — կանչեցին միքանիսը:

— Մի անգամ կինս յեղել եր մոտը, զար-  
մանալի բաներ եր պատմում, — վերջացրեց վե-  
զիրը:

— Յերբ ալդպես ե, թող մինը գնա նրա  
մոտ հարցնելու, չե՞, վեզիր, — հարցրեց ավագ  
իշխաններից մինը:

— Թող գնա, թող գնա, վորքան շուտ,  
այնքան լավ, — հրամայեց վեզիրը:

Իսկույն մի յերիտասարդ իշխան ձի հեծավ  
և գնաց Վարդոլի մոտ իր ծառաների հետ:

Յերբ քաղաք յեկավ Գուլիսվարդու մոտ, նա  
այնտեղ տեսավլ միքանի մարդ՝ գուշակելու հա-  
մար յեկած: Ըստ սովորության՝ յերիտասարդնե-  
րի, նամանավանդ այնպիսիների, վորոնց հանձնը-  
ված ե մի վորես պետական գործ, պատվիրա-  
կը դես ու դեն հրեց ամենքին և ներկայացավ  
Վարդոլին:

— Ի՞նչ ես ուզում, վորդի, — հարցրեց  
Վարդոն:

- Վեզիրից եմ ուղարկված, շնուտ գարի  
**դժիր:**  
 — Ի՞նչի մասին, վորդի, պատմիր:  
 Յերիտասարդը պատմեց ու լերբ վերջացրեց,  
 լոեց: Վարդուի դեմքին ժպիտ յերևաց:  
 — Ահա ժամանակդ հասավ, Վարդո, թե  
 վոր մի բան կարող ես անել, արա,—ասաց իր  
 սրտում Վարդոն մտածկոտ:  
 — Շատ մի մտածիր, իմ Վարդո, շուտ ա-  
 սա,—խնդրեց յերիտասարդը:  
 — Վոչ, վորդի, շտապելով գործ չի շինվի,  
 և բերդն ել չի կառուցվի:  
 — Ինչ վոր ուզում ես, շուտ հարցրու,—  
 վրա բերեց յերիտասարդը:  
 — Դեռ ասա, Սուրամում Դուրմիշխան ա-  
 նունով վաճառական ապրում ե, թե վոչ:  
 — Ապրում ե:  
 — Վորդի ունի՞:  
 — Ինչպես չե, մի վորդի ունի, իմ հասա-  
 կակիցն ե ու ընկերը, գեղեցիկ Զուրաբը:  
 — Լավ, այժմ գնա և ասա վեզիրին, վոր  
 յեթե ինքն անձամբ չգա, վոչինչ չեմ կարող ի-  
 մանալ. ասա, վոր յես խնդրում եմ, վոր գա  
 ինձ մոտ, յեթե Վրաստանի բարորությունն ե  
 ցանկանում:  
 — Ի՞նչ ես ասում, այ կին, մի բան ասա,  
 այնպես չեմ կարող գնալ:

— Վո՞չ, վորդի, քեզ չեմ կարող ասել, ժամանակ մի կորցնի, շուտ գնա. Վրաստանի բախտը քեզնից ե կախված.—և յերիտասարդին համարյա թե զոռով դուրս արեց:

— Հապա ի՞նչ անեմ, վեզիրին ի՞նչ ասեմ:

— Ասա, վոր ինքը դա, նա յե կարեոր:

Յերիտասարդն իսկույն հեծավ ձին ու յետ դարձավ:

Դուլիսվարդին մտածկոտ ներս մտավ և սպասողներին բոլորին ել արձակեց, ասելով, վոր վաղը դան նույն որն եեթ քաղաքում լուր տարածվեց, թե Վարդոյի մոտ զորքից մի մարդ յեկավ դուշակության, վորից հետո Վարդոն սասաիկ դարդոտ դարձավ:

— Ապա, Վարդո,—մտածում եր Վարդոն,— հասավ քո վրիժառության ժամը, թե կարող ես մի բան անել, այժմ կերևա, ոհ, անիծվիս դու, Դուրմիշան, ի՞նչու կործանեցիր խղճուկիս, ի՞նչ եցիր ուզում ինձնից, ի՞նչ արի քեզ, ի՞նչու զցեցիր ինձ այս վիճակի մեջ. խեղճ գլուխս. մարմնովս կորած, հոգով ել պիաի կորչեմ, — և սկսեց դառնապես լալ:—Ա՛յ թուլամորթ, իմ գլուխս, վախեցար հա.—մի փոքր հետո նորից սկսեց խոսել.—սիրտդ խոցոտողը ձեռդ ե ընկել, ապա ի՞նչ տեսակ տանջանք պիաի հնարես նրա համար: Նրա մահը, դա քիչ ե նրա համար, թող

նա յել այնպես տանջվի, ինչպես տանջվում եմ  
յես այս քսան տարում:

Վեզիրը գրբացի պատասխանն իսկացավ թե  
չե, իսկույն հեծավ ձին, մինչեւ անգամ տուն  
շմտավ և ուղղակի գնաց Վարդոյի մոտ:

— Ապա, սիրելիս, ասա, ի՞նչ պիտի անեմ:  
— Դժուք եք վեզիրը. — հարցըրեց նրան Վար-  
դոն:

— Յես եմ:

— Յեթե դու յես, ապա քեզ վրա յե դըր-  
ված և մեծ պատասխանառվությունը. խեղճ  
պարոնս, ինչ վատ ժամանակ եւ վիճակվել ձեզ  
վեզիր լինել. վո՞ն, աստված իմ, այս ինչ եմ տես-  
նում. անիծված անհավատներ, ուր եք գալիս,  
ի՞նչ եք ուղում մեր խեղճ Վրաստանից. աստ-  
ված, ի՞նչ արինք, ինչով մեղանչեցինք, այսպես  
սաստկորեն ինչու յես պատժում մեզ. վայ, վայ,  
այս ինչքան են գալիս. մայր աստվածածին, դու  
աղատիր մեզ! Ո՞հ, աստված, սպանում են. ահա  
մայրերից խլում են զավակներին ու հավերի  
նման մորթուառում: Մի թողնի, խեղճ կին, մի տա  
վորդուդ, վո՞ն, խլեց անիծվածը, ոգնիր, պարոն,  
ոգնիր, ապա թե վոչ ամենքս կկորչենք:

— Ի՞նչ անեմ, ասա, — զարմացած ասաց  
վեզիրը:

— Ահա տեսնում եմ, — շարունակեց Վար-

դոն, — անհավատների զորքը շրջապատեց մը ջլուն-ների նման Սուրամի բերդը։ Շուտ, շուտ շինեցեք, միայն դա կարող ե զորքի առաջն առնել, թե վոր այդ բերդը չշինվի, այստեղ ել կգան, աստված իմ, ի՞նչ կլինի մեր վիճակն այն ժամանակի Յո մանր վորդոցդ, մի կոտորել տա անհավատներին, և Վարդոն սկս' ց լալ,

Ճիշտ լաց եր լինում, թե սուտ, չգիտեմ. միայն քսանեմեկ տարվա ընթացքում այնպես վարժվեց դերասանության մեջ, վոր դժվար թե ալժման դերասաններից մեկը նրա նման լիներ։

— Ի՞նչ անեմ. վճնց պետք ե անեմ, ասա շուտ, — հարցը եց վեզիրը։

— Վորեե կ' ըպ պիտի կառուցեա:

— Չե վոր շինում ենք, բայց վոր քանդվում ե, ինչպես անեմ։

— Դուրս ածեք այն հիմքը վորը գցել եք, յերկու գազ նորից փորեք, որհնել տվեք քահանային, բայց.. այս ինչ եմ տեսնում, ոհ աստված, դու փրկիր ինձ. պարոն, թող անիծվի այն որը, յերբ յես զրբացություն սկսեցի. պարոն, ականջ մի դնի ինչ վոր ասելու յեմ, վոչ, ականջ դիր, լավ ականջ դիր, հարկավոր ե, վոր գիտենաս։ Նրա իրագործվելուց ե կախված Վրաստանի ազատումը, Վրաստանի հաջողությունը։

— Ասա, իսեր աստծու, ասա շուտ:

— Բերդի պատերի մեջ խուրդալի փոխարեն (մանր խիճքար) միամոր տղին՝ Դուրմիշխանի վորդի Զուրաբին պիտի դնեք:

— Ինչպես թե միամոր վորդի Զուրաբին, ինչ ես ասում, այ կին. — շփոթված հարցըց վեզերը:

— Զուրաբին, այո, Զուրաբին պիտի դնեք պատի շարքի մեջ, առանց նրան պատ չեք կարոք շինել, ոհ, գետին, պատովիր ու կլանիր ինձ, վոր այսպիսի խոսք թուավ բերնիցս. թշվառ մայրիկ, աշխարհի նզովքի համար ծնեցիր ինձ:

— Ինչու, մայրիկ, դու ինչ վոր տեսնում ես, այն ես ասում, դու ինչ մեղավոր ես. տխրությամբ ասաց վեզիրը և սաստիկ տխրամած հեռացավ այնտեղից և վերադարձավ իր տեղը:

— Լավ ընծա կտանի վեզիրն իմ Դուրմիշխանին. յերանի հարցնի՝ թե այդ ընծան ումից եւ թող իմանա, թե ինչ կարող ե անել մի վոզորմելի քոծ. լոիր, սիրտս, քսան տարի ավել ե աստծուց բաժանվել ես, ինչի յես դրանով ինձ գախեցնում:

## VII

Գնում ե մեր վեզիրը Սուրամ՝ սաստիկ տըխրած ու մտածկոտ, իսկ արեր ժպտում ե ուրախ,

կարծես թե ծիծաղում ե մարդուս նեղութիւն  
վրա և իբր թե վոչ մի կապ չունի նրա կլանքի  
հետ:

Հենց վոր վեզիրը Սուրամ հասավ, նույն որն  
և թ հրաման արձակեց, վոր հին հիմքը դուրս  
ածեն և յերկու գաղ խորութիւնը դարձիալ փորեն:  
Հրամանն խկույն կատարվեց և մյուս որը մաղ-  
թանքից հետո նոր հիմք գցեցին և մինչև գետնի  
յերեսը հասցըին: Բանն այստեղ հասավ, յերբ  
վեզիրը պիտի հայտարարեր գրբացի վերջին խոր-  
հուրդը:

Յերբեմն շատ դժվարին ե աշխարհիս առա-  
ջավորների պարտականությունը: Խեղճ վեզիրն  
ուրախութիւնը կթողներ իր պաշտոնը, միայն  
թե նա ստիպված չլինի հայտարարելու և խառ-  
նվելու այս սարսափելի գործի մեջ: Բայց ինչ  
անի: Հայրենիքը փորձութիւն մեջ ե, սիրու  
պիտի լոխ: Լավ ե մինը զոհվի հայրենիքի համար,  
քան թե կոտորվեն հազարները: Այս դատողու-  
թիւնը սրտապնդված՝ վեզիրը կանչեց վարպետ-  
ներին:

— Ինչ վոր հրամայեմ քեզ, Բերո, անմիջա-  
պես ամենքդ պիտի կատարեք.—ասաց նրանց.  
—ով կսկսի մտածել կամ բանելիս ձեռները կդո-  
ղան, նա անմիջապես կսպանվի իմ ծառաներից.  
լսեցի՞ք:

— Հսեցինք, քեզ մատաղ.—ասին վարպետները:

— Գնացեք, առայժմ սրանից ավել ասելիք չունեմ. իսկ դու, Բերո, մնա ալստեղ,— ասաց վեզիրը դլխավոր վարպետին:

— Հրամայեցեք, ցավդ տանեմ:

— Հաճելի բան չպիտի ասեմ, իմ Բերո, ասաց նրան վեզիրը.—ինչ վոր ունիմ ասելու, այնքան սոսկալի յե, վոր ասել նույնիսկ դժվարանում եմ:

— Ինչ անենք, ցավդ տանեմ, հաճելի յե՝ թե վոչ, հրամայեցեք և յեթե այդ բանի իրագործումն ինձանից ե կախված, ձեզ քաջ հայտնի յե, վոր գլուխս չեմ խնայի:

— Պատի մեջ կենդանի մարդ պիտի դնեք.  
— արագությամբ ասաց վեզիրը:

— Ի՞նչ եք հրամայում, ձեզ մատաղ,—շփոթված բացականչեց Բերոն:

— Ինչ անեմ յեղբայր, հայրենիքի բարեկեցությունը պահանջում ե մի այդ տեսակ զոհ. առանց նրան չենք կարող շինել բերդը: Մի խոսքով, պատրաստ կաց. այժմ դնա:

— Աստված իմ, կենդանի մարդ, պատի մեջ,  
— ասաց մտածմունքի մեջ խորասուզված վարպետը, յերբ դուրս եր գալիս վեզիրի բնակարանից: Ապա վեզիրը կանչեց ըոլոր իշխաններին և հայտ-

նեց նրանց ամեն բան. նրանցից միքանիսին հրամալեց, վոր Զուրաբին տանեն այնտեղ, վորտեղ հարկավոր եր, ապա հանկարծ բռնեն, կապեն և տան վորմագիրներին: Մնացածներին ել ասաց, վոր այդ ժամանակ զորք պատրաստ ունենան, վորպեսդի շրջապատեն այն տեղը, վորտեղ այս բանը պիտի տեղի ունենա:

Միքիչ անց, Զուրաբը գեղնած՝ վորպես մեռել, կապած ձեռներով կանգնած եր պատի մեջ. իսկ վորմագիրները շտապ-շտապ պատերն ելին կառուցում նրա շուրջը:

—Ախ, աստված, ի՞նչ հանցանք գործեցի, ինչու յեք թաղում կենդանի. —Ժամանակ առ ժամանակ բացականչում եր լքված ձայնով Զուրաբը:

Աշխարհումս բարի լուրն այնպես շուտ չի տարածվում, ինչպես վատը: Զուրաբին դեռ մինչեւ ծնկները չելին թաղել, յերբ նրա մալրը՝ մազերը դզգած վաղում եր բերդի կողմը:

— Ապա, տղերք, շղթան խտացրեք, ցուց չտաք թշվառ մորը. — կանչեցին զինվորներին:

— Թողեք, իսեր աստծու, թողեք, Զուրաբ, զավակս, վորտեղ ես. ումն ինչ արիր, ի՞նչ են ուզում քեզանից, քեզ մատաղ լինի մայրդ: Թողեք, քրիստոնյա չեք. թողեք վորդուս մոտ. ինձ ել նրա հետ թաղեք, ինձ ել նրա հետ սպանեք:

— Մի վախիր, մայրիկ, չեն սպանի, պիտի  
փորձեն նրա անվեհեր տղամարդությունը, — ասաց  
զինվորներից մինը տիսրած:

— Թողեք վորդուս մոտ, թողեք իմ Զուրա-  
բի մոտ. կանչում եր Զուրաբի մայրը և ձգտում  
եր գնալ նրա կողմը:

Զուրաբը լսեց մոր ձտյնը:

— Մայրիկ, ոգնիր, քո Զուրաբին կենդանի  
յեն թաղում. — կանչեց Զուրաբն իր մորը:

— Վորդի, Զուրաբ, մինչև վժրտեղ թաղեցին:

— Վայ ինձ մայրիկ, մինչև ուսերս թաղեցին:

— Լավ, բավական չի. ի՞նչով չիմացաք նրա  
քաջությունը, տվեք իմ վորդուս, տվեք իմ Զու-  
րաբին:

— Վորդի, Զուրաբ, մինչև վժրտեղ թաղե-  
ցին:

— Վայ ինձ, մայրիկ մեռ . . . չթողին, վոր  
վերջացներ խոսքը և հանկարծ գլխին ածեցին  
մի քանի թարախ կիր:

— Վայ ինձ, — բղավեց Զուրաբի մայրը ու  
ինչպես մեռել գետին փուվեց:

Թշվառին ուշաթափ տարան տուն և հազիվ  
լերեք ժամից հետո ուշքի բերին:

— Ախ, լերանի հիշեմ, ինչ վոր մոռացա.  
— ասաց Զուրաբի տարաբախտ մայրը, լերը ուշքի  
լեկավ և ժպտաց մի այնպիսի ժպիտով, վորն

ավելի շուտ լացի լեռ նման. Թշվառականը խե-  
լաղարվել եր:

— Եհ, վողորմելի, ել ինչ պիտի հիշես. բո  
Զուրաբին կենդանի թաղեցին. — ասաց մի պառակ  
կին ու սկսեց բարձր ձախով լար:

— Ախ, յերանի միտս ընկնի. — ասաց Զու-  
րաբի մալրը և իր պղտոր աչքերով անմտորեն  
նայեց այն պառավին:

Այն ժամանակ Դուրմիշանը տուն եր  
վերադառնում սաստիկ տիսուր, թեև իսկապես  
տիսրելու առիթ չուներ: Արդյունավետ կերպով  
վերջացրեց իր առևտուրը. գրպանը փողով լցըած  
գալիս եր տանեցոց մոտ, վորոնց սաստիկ սի-  
րում եր, մանավանդ վորդուն: Կարծեմ տիւ ու-  
թիան առիթ չկար, բայց ասում են նախազգու-  
շացումն ուներ:

Դուրմիշանը յերբ մոտեցավ Սուրամին և  
տեսավ Սուրամի բերդը համարյա թե վերջացած,  
ասաց իր. մտքում:

— Քո արեք, ել հանաք չեն անում, տեսեք  
ինչքան են կառուցել բերդը, յերեսում ե սարսա-  
փելի պատերազմ պիտի լինի: Եհ, այժմ թեկուղ  
աշխարհս իրար անցնի, յես իմ գործս վերջացրի:  
Յերանի ով ե վերակացու նշանակված այս  
բերդը շինելու համար: Արդյոք Զուրաբը հրավի-  
րեց նրան: Պիտի խնդրեր, վոր մեզ մոտ ապրեր,

հետո պետք կզար, բայց յերեխ առանց ինձ չեն  
համարձակվի, դեռ ջենել ե, անփորձ ե: Այժմ,  
յերբ կհասնեմ, իսկույն ճաշ կսարքեմ, կհրա-  
վիրեմ, կծանոթանամ, ով ուզում ելինի: Ստամ-  
բոլից բերած իրեղեններից ել մի ընծա կտամ,  
վորով և բոլորովին կպարտավորեցնեմ: Այս  
մտքերով Դուրմիշանը մոտեցավ իր տանը:  
Ծառաները և գյուղի բնակիչներից վոմանք  
տիրած ընդունեցին նրան: Այս ի՞նչ ե նշանա-  
կում: Առաջ վոր գալիս եր, ամենքը՝ մեծ ու  
փոքր դիմավորում ելին նրան ուրախ-ուրախ,  
մինը ձին եր վերցնում նրանից, մյուսն ոգնում  
եր ձիուց իջնելու ժամանակ: Այս ի՞նչ սուգ ե:  
Այս վոր նկատեց Դուրմիշանը, սարսափահար  
յեղավ. նա համոզվեց, վոր իր ընտանիքում ի՞նչ-  
վոր դժբախտություն ե պատահել:

— Ի՞նչ ե, տանը վողջ են ամենքը, — հար-  
ցրեց նա շփոթված դիմավորողներին, ուր ե կինս:

— Ներս համեցեք, տանին ե. — պատասխա-  
նեցին նրանք տիրած:

Դուրմիշանը տուն մտավ: Գետնի վրա  
փռած կապերտների վրա նստած ելին միքանի  
պառավ կին՝ սկեր հագած. սրանց մեջտեղ նստած  
եր Դումիշանի կինը: Վերջինս խորասուզված  
եր մի ի՞նչ-վոր մտքի մեջ. նկատվում եր, վոր  
նա աշխատում եր ի՞նչ վոր բան հիշել: Մյուս

կողմը կանգնած եր քահանան ու ուրարով և  
խաչով:

Դուրմիշխանը, յերբ տեսավ այս բոլորը,  
մեռելի նման գունատվեց և խիստ դեղնեց ու  
թուլացած ընկավ թախտի վրա:

— Գլխիս ի՞նչ փորձանք ե յեկել, — բացա-  
կանչեց լալով, — ասացեք, սիրտս միք խոցոտի:

Նա դեռ մի ինչ-վոր բանի հույս ուներ և  
հավատացած եր, վոր այս դժբախտությունը  
նրա Զուրաբին չեր վերաբերում:

Կանայք լալով հայտնեցին նրան ամբողջ  
ճշմարտությունը. նույն ըոպելին Դուրմիշխանը  
ծերացավ համարյա թե տասը տարով:

— Այ կի՞ն, ի՞նչ արիր վորդուս, ուր ե իս  
Զուրաբը. ինչու նրա հետ չմեռար, քո սիրելի  
Զուրաբի հետ. վայ, իմ վորդի Զուրաբ, իմ հույսս,  
իմ կյանքս, կարելի յե ընկերներդ թշնամացան,  
վորդի, դու միշտ գերազանցում ելիր նրանց.  
ինչու չասիր, վորդի, վոր ծեր հորդ սպանելին.  
քեզ հետ ի՞նչ դործ ունելին, իմ աչքիս լույս.  
վայ իմ որիս:

— Սրտապնդվիր, Դուրմիշխան, — սկսեց  
խրատել քահանան, — քո փրկիչը վորքան տանջանք  
կրեց քեզ համար, հիշիր, մի այլ կյանք կա,  
հավիտենական կյանք, ուր կտեսնես Զուրաբին  
և միշտ միասին կլինեք:

— Այ կին, ի՞նչ արիք իմ Զուրաբին, ի՞նչու չզգուշացար. ասա շուտ. ուր և մեր Զուրաբը՝ — հարցրեց լալով Դուրմիշխանը կնոջը և դերիալի թևից քաշեց:

— Ախ, լեռանի հիշեմ, մոռացա ինչ վոր պիտի ասելի, — պատասխանեց նա և նայեց պըղտորված աչքերով:

— Վայ, իմ քանդված ոջախ. — շարունակեց Դուրմիշխանը. — այս ի՞նչ ե պատահել ինձ, ումն ինչ նեղություն հասցրի. ինչո՞ւ ինձ չսպանեցին, ի՞նչու չխլեցին հարստությունս. նա ումն ինչ արավ, անմեղ աղավնիս: Վայ, իմ վորդի Զուրաբ. այս ի՞նչ որի հասար. նույնիսկ արժանի չեղար բնական մահվան, սովորական թաղման. կենդանի թաղեցին, վորդի. վայ իմ ապրելուն:

— Լավ, բավական ե, Դուրմիշխան, զուլավ գիտես, վոր կոկծանքով և սգով վոչինչ չես ավելացնի. — միսիթարում ելին նրան միքանիսը:

— Սպասիր, վորդի, թե կենդանի մնացի, կդանեմ թշնամուդ, կդանեմ նրան, ով քեզ այդ տեղը զցեց և վայ նրա կյանքին:

— Մեր փրկիչը ոլաւավիրել ե մեղ ներել թշնամիներին, — ասաց քահանան. — նա ինքը մեղ դրա որինակը տվեց, նա խաչի վրա աղոթում եր իր թշնամիների համար:

Բայց քահանանավի խոսքերը զուր ելին. նա

այդ միջոցին մտածում եր, վոր վաղն և յեթ գնա  
գտնի այն գրքացին, վոր տվել եր վեզիրին մի  
այդպիսի սարսափելի խորհուրդ և վորի զոհը  
դարձավ նրա Զուրաբը. նրանից եր ուղում  
իմանալ այս բոլորի պատճառը: Յեվ իրավ, վոչ  
սպաց, մեր սովորության համաձայն, վոչ ժամ  
գնաց, ինչպես կարգն եր ու վայել եր մի պատ-  
վավոր ոջախի, վոչ ել պատարագ անել տվեց  
իր Զուրաբի համար: Մյուս որը կըկին ձի նստեց  
և ուղևորվեց քաղաքի կողմը: Թիֆլիս հասավ թե  
չե, խակուն հարց ու փորձ արեց գրքաց Վար-  
դուի տունը: Վարդոն այն ժամանակ այնպես  
հոչակված եր ամբողջ Թիֆլիսում, վոր նույնիսկ  
փոքր մանուկներն ել գիտելին նրա տունը,  
ուրեմն զարմանալի չե, վոր հենց առաջին պա-  
տահողը սովորեցրեց Դուրմիշանին նրա տեղը:  
Դուրմիշանը մտավ:

— Տղերք, սկսվեց վորոտմունք, փալատա-  
կումն, կայծակ, պատրաստվեցեք.—բացականչեց  
Ալեքսին՝ ծաղրելով:

— Անիծվես զու Մեֆիստոֆել, — ասաց նրան  
Սիկոն, վոր ինչպես յերեսում եր մեծ ուշադրու-  
թյամբ եր լսում. — այ մարդ, դու պատմիր:

Դուրմիշանը մտավ և հարցրեց, թե վորն ե  
Վարդոն: Զարմանալի յե, նոքա իրար ճանաչել

չկարողացան, այնքան ելին փոխվել յերկուսն ել  
իրարից բաժանվելուց հետո:

Դուրմիշանին ցուց տվին Վարդոյին:

— Զի՞ կարելի արդյոք առանձին խոսել քեզ  
հետ, — ասաց նրան Դուրմիշանը վրդովված:

— Աչքիս վրա. — պատասխանեց Վարդոն.  
Նա ուշադրություն չդարձրեց նրա վրդովմուն-  
քին, վորովհետև շատ անդամ եր պատահել տես-  
նել այդպիսի վրդովվածների:

Միքանի ըոպեցից հետո Վարդոն և Դուրմիշ-  
անն առանձնացան մի սենյակում:

— Ասա, խնդրեմ, — սկսեց Դուրմիշանը,  
— գմբ ասիր վեղիրին, վոր իմ վորդուս կենդանի  
թաղեցին Սուրամի բերդում:

Այս խոսակցության միջոցին Վարդոն թա-  
գուն ձեռը տարավ մութաքի տակը և հանեց մի  
փոքր դաշույն:

— Այս, յես ասի. — պատասխանեց Վարդոն  
բոլորովին անվրդով:

— Ի՞նչու, անիծված, ի՞նչու. նա քեզ ի՞նչ  
արեց:

— Դուրմիշան, ապա նայիր ինձ, չես  
ճանաչում. դու իմ սիրտս սպանեցիր, իսկ յես՝  
քո վորդուն, արդեն մեր հաշիմսերը մաքրված են:

— Ո՞հ, անիծյալ Գուլիտվարդո, այդ դմբ  
յես. — ասաց կամաց Դուրմիշանը, հարձակվեց

և ձեռքով սեղմեց նրա կոկորդը։ Դառնությունից մոռացավ մի այլ զենք գործածել։

— Յեկ, իմ Դուրսմիշխան, յեկ, քսան տարի այս որվան ելի սպասում, — ասաց Վարդոն, զրկեց և դաշունը խրեց թիկունքին։

Միքանի ժամից հետո սպասավորները դառն յերկուսին ել մեռած՝ թախտի վրա, իրար զրկած, ինչպես յերկու սիրահարներ։ Յերեսում եր՝ նրանցից վոչ մեկը ճիգ չեր թափել մահվանից պաշտպանվելու համար։

Դուրսմիշխանի կինը, Զուրաբի մայրը խելագարվելուց հետո սիրեց Սուրամի բերդի մոտ շրջագալել։ Գնում եր խեղճը, կանգնում, ինչ-վոր բան մտածում և ապա վշտացած տսում։ — Այս, յերանի հիշեմ։ — և տիրած յետ եր դառնում։

Այսպես անցավ համարյա թե յերեք տարի։ Ահն ել անցավ ճիշտ այնպես, ինչպես յերբեմն անցնում ե վորոտմունքը։ Վորոտմունք շատ ե լինում, իսկ անձրև վոչ։ Մի անգամ Զուրաբի մայրը, յերբ ըստ սովորության կանգնած եր Սուրամի բերդի առաջ ու մտածում եր, հանկարծ ճչաց ահոելի ճախով։ — Վայ իմ վորդի Զուրաբ, — և ուշաթափվեց։ Նրա թուլացած մարմինն այլես չկարողացավ տանել սրտի կսկիծը։ Խեղճը մեռավ։ Թաղեցին այնպես վայել

[ 350 թթ ]

Հայոց  
26.98

եր թաղել մեկին, վորի վորդին իր կլանքը զն-  
հեց հայրենիքին այնպես սոսկալի կերպով:

Ասում են, իբր թե այնտեղ, վորաեղ կեն-  
դանի թաղեցին դժբախտ Զուրաբին, թաց և և  
արտասուքի պես կաթկթում ե, և իբր թե լուս-  
նյակ գիշերով դուրս ե գալիս հերարձակ սևա-  
զգեստ մի կին և լալով ասում:

Սուրամի ամրոց,  
Տեսա փափագով,  
Զուրաբս ծոցդ ե,  
Պահիր խնամքով:

---

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



906002698

[ 350 թթ.]

Եր թաղել մեկին, վորի  
հեց հայրենիքին այնպես  
Ասում են, իբր թե  
դանի թաղեցին դժբախ  
արտասուքի պես կաթ  
նուակ ոհօն -

Ծառակ  
2698